



COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME
EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS

ՄԵԾ ՊԱԼԱՏ

ՍԵՅԴՈՎԻՉՆ ԸՆԴԴԵՄ ԻՏԱԼԻԱՅԻ
[CASE OF SEJDOVIC v. ITALY]

(Գանգառ թիվ 56581/00)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

1 մարտի 2006թ.

Translation co-funded
by the European Union



Սույն թարգմանությունը իրականացվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից: Սույն թարգմանության մեջ ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության պաշտոնական տեսակետները:

Սեյդովիչն ընդդեմ Իտալիայի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, հանդես գալով Մեծ պալատի հետևյալ կազմով՝

Լուզիուս Վայլդհաբեր [Luzius Wildhaber]՝ *Նախագահ,*

Քրիստոս Ռոզակիս [Christos Rozakis],

Ժան-Փոլ Կոստա [Jean-Paul Costa],

Նիկոլաս Բրացա [Nicolas Bratza],

Բոշտյան Մ. Չուպանիչիչ [Boštjan M. Zupančič],

Լուկիս Լուկասիդես [Loukis Loucaides],

Կոռնելիու Բիրսան [Corneliu Bîrsan],

Վոլոդիմիր Բուտկևիչ [Volodymyr Butkevych],

Վլադիմիրո Չագրեբելսկի [Vladimiro Zagrebelsky],

Անտոնելլա Մուլարոնի [Antonella Mularoni],

Ստանիսլավ Պավլովշի [Stanislav Pavlovski],

Լեխ Գարլիկի [Lech Garlicki],

Էլիզաբեթ Ֆուրա-Սանդստրոմ [Elisabet Fura-Sandström],

Ղենաթեն Յեգա [Renate Jaeger],

Էլբերտ Մեյեր [Egbert Myjer],

Սվերե Էրիկ Յեբենս [Sverre Erik Jebens],

Դանուտե Յոչիենե [Danutė Jočienė]՝ *դատավորներ,*

և Լոուրենս Էրլի [Lawrence Early]՝ *Մեծ պալատի քարտուղարի տեղակալ,*

2005 թվականի հոկտեմբերի 12-ին և 2006 թվականի փետրվարի 8-ին տեղի ունեցած դռնփակ խորհրդակցությամբ,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց 2006 թվականի փետրվարի 8-ին:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, այն ժամանակ Հարավատլանտիկ Ռաշնային Հանրապետության քաղաքացի պրն Իսմեթ Սեյդովիչի [Ismet Sejdovic] («դիմումատու») կողմից ընդդեմ Իտալիայի Հանրապետության 2000 թվականի մարտի 22-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 56581/00) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Վեսթերստեդտում (Գերմանիա) գործող փաստաբան պրն Բ. Բարթոլդի [B. Bartholdy]: Իտալիայի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել են ներկայացուցիչ պրն Ի.Մ. Բրագուլիան [I.M. Braguglia] և համաներկայացուցիչ պրն Ֆ. Քրիսաֆուլլին [F. Crisafulli]:

3. Դիմումատուն, մասնավորապես, բողոք է ներկայացրել առ այն, որ ինքը դատապարտվել էր հեռակա կարգով (*in absentia*)՝ առանց Իտալիայի դատարաններում իրեն պաշտպանելու հնարավորություն ունենալու, ինչը խախտել էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածը:

4. Գանգատը հանձնվել է Դատարանի Առաջին Բաժանմունքի քննությանը (Դատարանի կանոնակարգի 52-րդ կանոնի 1-ին մաս): 2003 թվականի սեպտեմբերի 11-ին այն ճանաչվել է մասնակիորեն ընդունելի տվյալ Բաժանմունքի Պալատի կողմից, որը հանդես է եկել հետևյալ կազմով՝ Քրիստոս Ռոզակիս [Christos Rozakis]՝ Նախագահ, Փիր Լորենզեն [Peer Lorenzen], Ջիովաննի Բոնելլո [Giovanni Bonello], Նինա Վայիչ [Nina Vajić], Սնեյանա Բոտուչարովա [Snejana Botoucharova], Վլադիմիրո Չագրեբելսկի [Vladimiro Zagrebelsky], Էլիզաբեթ Շտայներ [Elisabeth Steiner]՝ դատավորներ և Սյորեն Նիլսեն [Søren Nielsen]՝ այդ ժամանակ Բաժանմունքի քարտուղարի տեղակալ:

5. 2004 թվականի նոյեմբերի 10-ին նույն Բաժանմունքի Պալատը, հանդես գալով հետևյալ կազմով՝ Քրիստոս Ռոզակիս [Christos Rozakis]՝ Նախագահ, Փիր Լորենզեն [Peer Lorenzen], Ջիովաննի Բոնելլո [Giovanni Bonello], Անատոլի Կովլեր [Anatoly Kovler], Վլադիմիրո Չագրեբելսկի [Vladimiro Zagrebelsky], Էլիզաբեթ Շտայներ [Elisabeth Steiner], Խանլար Հաջիև [Khanlar Hajiyev]՝ դատավորներ և Սյորեն Նիլսեն [Søren Nielsen]՝ Բաժանմունքի քարտուղար, կայացրել է վճիռ, որով միաձայն արձանագրել է, որ տեղի էր ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Ավելին, այն համարել է, որ միայն խախտման արձանագրումը բավարար արդարացի հատուցում էր դիմումատուի կրած ոչ նյութական վնասի համար, որ խախտման աղբյուրը ներպետական օրենսդրության և պրակտիկայի թերություններից բխող համակարգային խնդիր էր, և որ պատասխանող պետությունը, համապատասխան միջոցներ ձեռնարկելով, պետք է ապահովեր հեռակա կարգով դատապարտված անձանց՝ նրանց առաջադրված մեղադրանքին կրկին ըստ էության անդրադառնալու իրավունքն այն դատարանի կողմից, որը նրանց լսած կլիներ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների համաձայն:

6. 2005 թվականի փետրվարի 9-ին Կառավարությունը՝ Կոնվենցիայի 43-րդ հոդվածի և 73-րդ կանոնի համաձայն, զործը Մեծ պալատին հանձնելու միջնորդություն է ներկայացրել: 2005 թվականի մարտի 30-ին Մեծ պալատի հանձնախումբն ընդունել է այդ պահանջը:

7. Մեծ պալատի կազմը որոշվել է Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի դրույթների և 24-րդ կանոնի համաձայն:

8. Կառավարությունը ներկայացրել է հուշագիր, իսկ դիմումատուն ձեռնպահ է մնացել՝ հղում կատարելով իր կողմից Պալատի վարույթի շրջանակներում ներկայացված դիրքորոշումներին: Բացի այդ, Սլովակիայի կառավարությունը, որը Նախագահի կողմից գրավոր ընթացակարգին միջամտելու թույլտվություն էր ստացել, ներկայացրել

է երրորդ կողմի դիտողություններ (Կոնվենցիայի 36-րդ հոդվածի 2-րդ կետ և 44-րդ կանոնի 2-րդ մաս):

9. 2005 թվականի հոկտեմբերի 12-ին Ստրասբուրգում գտնվող Մարդու իրավունքների պալատում կայացել են դռնբաց դատական լսումներ (59-րդ կանոնի 3-րդ մաս):

Դատարան ներկայացել են.

(ա) *Կատալալություն անունից՝*
 պրն Ֆ. ՔՐԻՍՏՖՈՒԼԼԻՆ՝ *magistrato*, Արտաքին գործերի
 նախարարություն՝ *համաներկայացուցիչ,*

(բ) *դիմումատուի անունից՝*
 պրն Բ. ԲԱՐԹՈՒԴԻՆ, *իրավախորհրդատու,*
 տկն ՈՒ. ՎԻՆԵՐԸ [U. WIENER], *խորհրդատու:*

Դատարանը լսել է նրանց ելույթները և պատասխաններն իր որոշ անդամների կողմից առաջադրված հարցերին:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

10. Դիմումատուն ծնվել է 1972 թվականին և բնակվում է Համբուրգում (Գերմանիա):

11. 1992 թվականի սեպտեմբերի 8-ին պրն Ս.-ն մահացու վնասվածք է ստացել Հռոմում գտնվող թափառականների ճամբարի (*campo nomadi*) վրա արձակված կրակոցի արդյունքում: Ոստիկանության կողմից վկաներից վերցված նախնական ցուցմունքներում նշվել է, որ սպանության պատասխանատուն դիմումատուն էր:

12. 1992 թվականի հոկտեմբերի 15-ին Հռոմի՝ Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորը կայացրել է դիմումատուի նկատմամբ նախնական կալանք նշանակելու մասին որոշում: Սակայն այդ որոշումը հնարավոր չէր կատարել, քանի որ դիմումատուի գտնվելու վայրն անհայտ էր դարձել: Արդյունքում, Իտալիայի իշխանությունները համարել են, որ նա միտումնավոր փորձել էր խուսափել արդարադատությունից և 1992 թվականի նոյեմբերի 14-ին նրան հայտարարել որպես «փախուստի դիմած անձ» (*latitante*): Դիմումատուն նույնականացվել է, որպես Քլոցե [Cloce] (կամ Քրոցե [Kroce]) Սեյդովիչ [Sejdovic] (կամ Սայդովիչ [Sajdovic])՝ Յուսուֆ [Jusuf] Սեյդովիչի [Sejdovic] (կամ Սայդովիչի [Sajdovic]) որդի և Չայմ [Zaim]

(կամ Չայն [Zain]) Սեյդովիչի [Sejdovic] (կամ Սայդովիչի [Sajdovic]) եղբայր՝ հավանաբար ծնված 1972 թվականի օգոստոսի 5-ին՝ Տիտոգրադում:

13. Քանի որ Իտալիայի իշխանություններին չէր հաջողվել կապ հաստատել դիմումատուի հետ վերջինիս իր պաշտպանին ընտրելու առաջարկություն անելու համար, նրանք նշանակել էին պաշտպան, որը տեղեկացվել էր, որ իր վստահորդի և չորս այլ անձանց գործով որոշված ամսաթվի նշանակվել էր դատաքննություն Հռոմի երդվյալ ատենակալների դատարանում:

14. Փաստաբանը մասնակցել է դատաքննությանը, սակայն դիմումատուն բացակա է եղել:

15. 1996 թվականի հուլիսի 2-ի դատավճռով, որը քարտուղարություն ի պահ է տրվել 1996 թվականի սեպտեմբերի 30-ին, Հռոմի երդվյալ ատենակալների դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել սպանության և ապօրինի կերպով հրազեն կրելու համար և դատապարտել նրան քսանմեկ տարի և ութ ամիս ժամկետով ազատազրկման: Դիմումատուի՝ ամբաստանյալի կարգավիճակով հանդես եկող ընկերներից մեկը նույն հանցագործությունների համար դատապարտվել է տասնհինգ տարի և ութ ամիս ժամկետով ազատազրկման, իսկ երեքն արդարացվել են:

16. Դիմումատուի փաստաբանը տեղեկացվել է, որ երդվյալ ատենակալների դատարանի կայացրած դատավճիռն ի պահ էր տրվել քարտուղարությանը: Նա չի բողոքարկել: Դիմումատուի մեղադրական դատավճիռը վերջնական է դարձել 1997 թվականի հունվարի 22-ին:

17. 1999 թվականի սեպտեմբերի 22-ին դիմումատուն Համբուրգում ձերբակալվել է գերմանական ոստիկանության կողմից Հռոմի գլխավոր դատախազության ձերբակալման կարգադրության հիման վրա: 1999 թվականի սեպտեմբերի 30-ին Իտալիայի արդարադատության նախարարը դիմել է դիմումատուի հանձնման խնդրանքով: Նա հավելել է, որ նրան Իտալիա հանձնելուց հետո, դիմումատուին, քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածի հիմքով, իրավունք կտրվեր Հռոմի երդվյալ ատենակալների դատարանի դատավճռի դեմ ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմում ներկայացնել:

18. Գերմանական իշխանությունների խնդրանքով, Հռոմի գլխավոր դատախազությունը հայտարարել է, որ ապացույցներից չէր երևում, որ դիմումատուն պաշտոնապես ծանուցվել էր ներկայացված մեղադրանքների մասին: Գլխավոր դատախազությունը չէր կարողացել ասել, թե արդյոք դիմումատուն կապ հաստատել էր նրան ներկայացնելու նպատակով տրամադրված փաստաբանի հետ: Ցանկացած դեպքում, փաստաբանը մասնակցել էր դատաքննությանը և ակտիվ դերակատարում ունեցել իր վստահորդի պաշտպանությունն իրականացնելիս՝ հրավիրելով բազմաթիվ վկաներ: Ավելին, Հռոմի երդվյալ ատենակալների դատարանը հստակ հաստատել էր, որ

դիմումատուն, որը բազմաթիվ վկաների կողմից մատնանշվել էր որպես պրն Ս.-ին սպանող, մեղավոր էր: Գլխավոր դատախազության կարծիքով դիմումատուն փախուստի էր դիմել պրն Ս.-ի մահից անմիջապես հետո ձերբակալումից և քննությունից խուսափելու նպատակով: Ի վերջո, Գլխավոր դատախազությունը հայտարարել է. «Հանձնման ենթակա անձը կարող է դատավճռի բողոքարկման թույլտվություն ստանալու միջնորդություն ներկայացնել: Սակայն, որպեսզի դատարանը համաձայնի կրկին քննել գործը, անհրաժեշտ է ապացուցել, որ մեղադրյալը սխալմամբ է համարվել որպես «փախուստի դիմած անձ»: Ամփոփելով՝ նոր քննության հնարավորությունը, նույնիսկ բողոքարկման ձևով (որի շրջանակներում կարող են ներկայացվել նոր ապացույցներ), մեխանիկորեն չի տրամադրվում:»:

19. 1999 թվականի դեկտեմբերի 6-ին գերմանական իշխանությունները մերժել են Իտալիայի կառավարության հանձնման խնդրանքն այն հիմքով, որ խնդրանքը ներկայացրած պետության ներպետական օրենսդրությամբ բավարար հստակությամբ չէր երաշխավորվում, որ դիմումատուն իր գործի վերաբացման հնարավորություն կունենար:

20. Իսկ մինչ այդ, դիմումատուն ազատ էր արձակվել 1999 թվականի նոյեմբերի 22-ին: Նա երբևէ չէր առարկել կատարմանը (*incidente d'esecuzione*) կամ ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմում չէր ներկայացրել (տե՛ս ստորև՝ «Վերաբերելի ներպետական օրենսդրությունը և պրակտիկան») Իտալիայում:

II. ՎԵՐԱԲԵՐԵԼԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

21. Քրեական դատավարության օրենսգրքի 670-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով («ՔԴՕ»), որի վերաբերելի հատվածներն ունեն հետևյալ բովանդակությունը, դատապարտման օրինականությունը կարող է վիճարկվել՝ առարկելով դրա կատարմանը.

«Եթե կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող դատավարի կողմից հաստատվում է, որ դատավճիռն իրավական ուժ չունի կամ հարկադիր կատարման փուլ դեռ չի մտել, նա, [այն բանից հետո], երբ ըստ էության [*nel merito*] գնահատում է, թե արդյոք պահպանվել են փախուստի դիմած համարվող դատապարտված անձին տրամադրվող երաշխիքները, ... կասեցնում է դրա հարկադիր կատարումը՝ անհրաժեշտության դեպքում կարգադրելով ազատ արձակել այդ անձին և շտկել դատական ծանուցումների հետ կապված թերացումները: Նման դեպքերում բողոքարկման ժամկետն սկսում է վերստին հոսել:»:

22. ՔԴՕ 175-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսվում է ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմում ներկայացնելու հնարավորություն: Դիմումատուի ձերբակալման

ժամանակ այդ դրույթի վերաբերելի հատվածները ձևակերպված էին հետևյալ կերպ.

« ... ամբաստանյալը՝ հեռակա կարգով դատապարտվելու դեպքում, կարող է դատավճռի բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու խնդրանք ներկայացնել, եթե նա կարող է ապացուցել, որ արդյունավետ կերպով տեղեկացված չի եղել [*effettiva conoscenza*] [դրա մասին] ... [և] պայմանով, որ նրա փաստաբանի կողմից որևէ բողոք չի բերվել և նրա կողմից կամ ... հեռակա կարգով դատապարտման մասին ծուլացելու դեպքում նրա փաստաբանի կողմից որևէ անփութություն չի դրսևորվել ..., որ նա դիտավորյալ չի հրաժարվել դատավարական քայլերն ի գիտություն ընդունելուց:

Բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու խնդրանքը պետք է ներկայացվի տասն օրվա ընթացքում այն օրվանից, ... երբ ամբաստանյալն իմացել է [դատավճռի] մասին, հակառակ դեպքում այն պետք է ճանաչվի անընդունելի»:

23. Երբ Վճռաբեկ դատարանին այս դրույթը մեկնաբանելու հնարավորություն է տրվել, այն արձանագրել է, որ ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմումի մերժումը չի կարող հիմնավորվել լոկ ամբաստանյալի անփութությամբ կամ հետաքրքրության բացակայությամբ, այլ որ հակառակը՝ պետք է դրսևորված լինի «դիտավորյալ վարքագիծ, որի նպատակը դատավարական քայլերն ի գիտություն ընդունելուց խուսափելն էր» (տե՛ս *Collini*-ի գործով Առաջին Բաժանմունքի կողմից 2000 թվականի մարտի 6-ին կայացված վճիռը (թիվ 1671), ինչպես նաև Վճռաբեկ դատարանի թիվ 5808/1999 վճիռը): Մասնավորապես, եթե դատավճիռը հանձնվել է անձամբ մեղադրյալին, մեղադրյալը պետք է ապացուցի, որ տեղյակ չէր դրանից և որ իր կողմից որևէ անփութություն չէր դրսևորվել. սակայն, եթե դատավճիռը հանձնվել է բացակա ամբաստանյալի փաստաբանին, դատարանը պետք է հաստատի, թե արդյոք ամբաստանյալը դիտավորյալ խուսափել է համապատասխան քայլերն ի գիտություն ընդունելուց (տե՛ս *Bylyshi*-ի գործով Երկրորդ Բաժանմունքի կողմից 2003 թվականի հունվարի 29-ին կայացված վճիռը (թիվ 18107), որում Վճռաբեկ դատարանը վերացրել է Ջենոայի վերաքննիչ դատարանի որոշումը, որով այն արձանագրել էր, որ անփութությունը կարող էր պայմանավորված լինել միայն որևէ տեղեկատվություն չստանալու ցանկությամբ՝ այդպիսով դիտարկելով անփութ Վարքագիծն ինչպես միտումնավոր, առանց որևէ փաստարկ ներկայացնելու այդ մոտեցումը հիմնավորելու համար):

24. 2004 թվականի նոյեմբերի 25-ին *Soldati*-ի գործով կայացված վճռում (թիվ 48738) Վճռաբեկ դատարանը (Առաջին Բաժանմունք) նկատել է, որ ժամկետանց բողոք բերելու թույլտվություն կարող էր տրամադրվել երկու պայմանի դեպքում՝ եթե մեղադրյալը վարույթի վերաբերյալ որևէ տեղեկություն չէր ունեցել, և եթե նա դիտավորյալ չէր խուսափել դատավարական քայլերն ի գիտություն ընդունելուց: Դատապարտված անձն էր պարտավոր ապացուցել, որ առաջին

պայմանը բավարարվել էր, իսկ երկրորդ պայմանի ապացուցման բեռը կրում էր «դատախազության ներկայացուցիչը կամ դատարանը»: Հետևաբար, երկրորդ պայմանի վերաբերյալ ապացույցների բացակայությունը կարող էր հոգուտ ամբաստանյալի օգտագործվել: Վճռաբեկ դատարանը, ըստ այդմ, արձանագրել է, որ մինչև ամբաստանյալներին որպես «փախուստի դիմած անձինք» հայտարարելը, իշխանությունները ոչ միայն պետք է նրանց որոնեն գործի հանգամանքներին համահունչ կերպով, այլև պետք է բացահայտեն, թե արդյոք նրանք միտումնավոր խուսափել էին դատարանի կարգադրած միջոցին՝ ինչպիսին ազատությունից զրկումն է, ենթարկվելուց (տե՛ս Առաջին Բաժանմունքի կողմից 2005 թվականի փետրվարի 23-ին *Flordelis and Pagnanelli* գործով կայացված վճիռը (թիվ 6987)):

25. 2005 թվականի ապրիլի 22-ին Խորհրդարանն ընդունել է թիվ 60/2005 օրենքը, որով 2005 թվականի փետրվարի 21-ի թիվ 17 օրենսդրական դեկրետը փոխակերպվել է օրենքի: Թիվ 60/2005 օրենքը հրապարակվել է 2005 թվականի ապրիլի 23-ի թիվ 94 Պաշտոնական տեղեկագրում (*Gazzetta ufficiale*): Այն օրինական ուժի մեջ է մտել հաջորդ օրը:

26. Թիվ 60/2005 օրենքով ՔԴՕ 175-րդ հոդվածում կատարվել են փոփոխություններ: 2-րդ մասի նոր տարբերակն ունի հետևյալ բովանդակությունը.

«Հետևյալ կարգով դատապարտվելու դեպքում ... դատավճռի բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնվում է ամբաստանյալի ներկայացրած դիմումի հիման վրա, եթե նա արդյունավետ կերպով [*effettiva conoscenza*] տեղեկացված չի եղել [նրա նկատմամբ] նախաձեռնված վարույթի կամ նրա դեմ կայացված դատավճռի [*provvedimento*] վերաբերյալ և դիտավորյալ կերպով չի հրաժարվել ներկայանալուց կամ դատավճիռը բողոքարկելուց: Դատական մարմիններն անցկացնում են այդ մասով անհրաժեշտ բոլոր ստուգումները:»:

27. Թիվ 60/2005 օրենքով ՔԴՕ 175-րդ հոդվածը լրացվել է նաև հետևյալ բովանդակությամբ 2-րդ *bis* մասով.

«Վերոշարադրյալ 2-րդ մասում նշված դիմումը պետք է ներկայացվի երեսուն օրվա ընթացքում այն օրվանից, երբ ամբաստանյալն արդյունավետ կերպով իմացել է դատավճռի մասին, հակառակ դեպքում այն ճանաչվում է անընդունելի: Մեկ այլ պետության կողմից հանձնման դեպքում, այդպիսի դիմում ներկայացնելու ժամկետն սկսում է հոսել ամբաստանյալին [Իտալիայի իշխանություններին] հանձնելու պահից ...»:

III. ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ R (2000) 2 ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ

28. «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերանայման կամ վերաբացման մասին» R (2000) 2 հանձնարարականում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն պայմանավորվող կողմերին

խրախուսել է «վերլուծել իրենց ներպետական իրավական համակարգերը՝ նպատակ հետապնդելով երաշխավորել գործի վերանայման համար անհրաժեշտ համարժեք հնարավորությունների առկայությունն այն դեպքերով, որոնցով Դատարանը հայտնաբերել է Կոնվենցիայի խախտում, մասնավորապես, երբ՝ (i) տուժող կողմը՝ ներպետական համապատասխան որոշման ելքի պատճառով, շարունակում է կրել շատ ծանր բացասական հետևանքներ, որոնք համարժեքորեն չեն վերացվում արդարացի հատուցման տրամադրմամբ և կարող են վերացվել միայն գործի վերանայման կամ վերաբացման միջոցով, և (ii) Դատարանի վճիռը հանգեցնում է այն եզրակացության, որ (ա) ներպետական վիճարկվող որոշումն ըստ էության հակասում է Կոնվենցիային կամ (բ) արձանագրված խախտման հիմքում ընկած են դատավարական այնպիսի լուրջ սխալներ կամ թերություններ, որ լուրջ կասկած է առաջանում բողոքի առարկա ներպետական վարույթի ելքի վերաբերյալ:»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

29. Կառավարությունը, նախևառաջ, ներկայացրել է իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ առարկությունն այն հիմնավորմամբ, որ դիմումատուն չէր օգտվել ՔԴՕ 175-րդ և 670-րդ հոդվածներով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից:

Ա. Պալատի որոշումը

30. Գանգատի ընդունելիության վերաբերյալ 2003 թվականի սեպտեմբերի 11-ի իր որոշմամբ Պալատը մերժել է Կառավարության այն առարկությունը, որ դիմումատուն չէր օգտվել ՔԴՕ 175-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության միջոցից՝ արձանագրելով, որ գործի հատուկ հանգամանքների հաշվառմամբ ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմումը գրեթե հաջողության հեռանկար չէր ունենա, և գոյություն ունեին հանգամանքներ, որոնք խոչընդոտում էին նրա կողմից դրանից օգտվելուն:

Բ. Կողմերի դիրքորոշումները

1. Կառավարությունը

31. Կառավարությունը նկատել է, որ Իտալիայի օրենքի համաձայն, հեռակա կարգով դատապարտված անձանց հասանելի էր իրավական պաշտպանության երկու միջոց: Առաջին հերթին, ՔԴՕ 670-րդ հոդվածի համաձայն, նրանք կարող էին կատարման առնչությամբ առարկություն ներկայացնել դատավճռի գոյության փաստը կամ դրա օրինականությունը վիճարկելու համար: Իրավական պաշտպանության այս միջոցն սահմանափակված չէր վաղեմության ժամկետներով. սակայն, վարույթի շրջանակներում պետք է այնպիսի թերություն արձանագրված լիներ, որը կարողանար հանգեցնել դատավճռի առոչինչ լինելուն: Թերությունը կարող էր, հատկապես, առնչվել դատական ծանուցումների կանոնների խախտմանը և, մասնավորապես, այն ամբաստանյալներին տրամադրված երաշխիքները չպահպանելուն, որոնց գտնվելու վայրն անհայտ էր: Եթե առարկությունը համարվեր ընդունելի, դատարանը պետք է կասեցներ պատժի կատարումը: Եթե այն բավարարվեր, դատավճռի բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնվում էր: Դիմումատուն կարող էր օգտված լինել իրավական պաշտպանության այս միջոցից, եթե ապացուցած լիներ, որ ոստիկանությունը որոնողական աշխատանքներ կատարելիս հետևողական չէր եղել, կամ այն ամբաստանյալներին տրամադրված երաշխիքները չէին պահպանվել, որոնց գտնվելու վայրն անհայտ էր:

32. Այնուհետև Կառավարությունը նշել է, որ կատարմանն առնչվող առարկության մերժման դեպքում դատարանն այնուամենայնիվ պետք է քններ ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու համար ներկայացված դիմումը, որը հեռակա կարգով դատապարտված անձինք կարող էին ներկայացնել առանձին կամ առարկության հետ միասին: Նման դիմումի բավարարման դեպքում, բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնվում էր, և ամբաստանյալն՝ անձամբ կամ պաշտպանի միջոցով, կարող էր իր գործով ցանկացած հիմնավորում ներկայացնել այն դատարանում, որն իրավասու էր քննել փաստի և իրավունքի բոլոր հարցերը: Ի տարբերություն կատարմանն առնչվող առարկությանը, ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմումի դեպքում չէր պահանջվում, որ վարույթի շրջանակներում որևէ ձևական կամ բովանդակային թերություն արձանագրված լիներ, մասնավորապես՝ որոնողական աշխատանքների կամ դատական ծանուցումների առնչությամբ:

33. Կառավարությունը պնդել է, որ տվյալ ժամանակահատվածում գործող ՔԴՕ 175-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության միջոցն արդյունավետ էր և մատչելի, քանի որ այն հատկապես նախատեսված էր այն գործերի նկատմամբ կիրառվելու նպատակով, որոնցով մեղադրյալները պնդում էին, որ իրենց

դատապարտման առնչությամբ որևէ տեղեկություն չէին ունեցել: Ճիշտ է, որ ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմումը պետք է ներկայացվեր տասնօրյա ժամկետում: Սակայն, այս ժամկետը, որն Իտալիայի օրենսդրության դեպքում յուրահատուկ չէր, բավարար էր ամբաստանյալներին՝ իրենց պաշտպանության իրավունքն իրացնելու հնարավորություն ընձեռելու համար, քանի որ որպես այդ ժամկետի մեկնարկային կետ, ամրագրված էր այն պահը, երբ նրանք «արդյունավետ կերպով տեղեկացվել էին որոշման» մասին (ինչպես Վճռաբեկ դատարանն արձանագրել էր 1990 թվականի հուլիսի 3-ին *Rizzo* գործով): Ավելին, այդ ժամկետը չէր վերաբերում բողոք բերելուն, այլ ընդամենն առնչվում էր ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմումի ներկայացմանը՝ բարդությամբ ավելի հեշտ գործընթաց:

34. Չնայած Իտալիայի քաղաքացի չլինելու հանգամանքը՝ զուգակցված լեզվաբանական և մշակութային դժվարություններով, կարող էր բարդացնել սահմանված ժամկետում դատավարական պահանջի պահպանումը, չէր կարելի ակնկալել, որ ներպետական օրենքներով սահմանված բոլոր ժամկետները ճկուն դարձվեին, որպեսզի դրանք հարմարեցվեին փաստական հանգամանքների անսահման բազմազանությանը, որոնցում կարող էին հայտվել ամբաստանյալները:

35. Ավելին, Կառավարությունն ընդգծել է, որ, Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն, չէր կարելի ենթադրել, որ ամբաստանյալները պատասխանատվությունից խուսափելու նպատակ էին հետապնդել, եթե նրանց հայտնաբերելու ջանքեր գործադրելիս ակնհայտ բացթողումներ էին եղել: Բացի այդ, ամբաստանյալներին պետք է տրամադրվեր այդ առնչությամբ գոյություն ունեցող ցանկացած կասկած փարատելու հնարավորություն՝ առանց անհարկի խոչընդոտներ առաջացնելու և ապացուցման չափազանց ծանր բեռ նրանց վրա դնելու: ԶԴՕ 175-րդ հոդվածով ամրագրված համակարգը բավարարում էր այդ պահանջները:

36. 175-րդ հոդվածի 2-րդ մասի (մինչև 2005 թվականի բարեփոխումները գործող խմբագրությամբ) քերականական վերլուծությունից, որը հիմնավորվում էր նաև Կառավարության կողմից Դատարան ներկայացված Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով (տե՛ս վերևում՝ 24-րդ և 25-րդ պարբերություններ), բխում էր, որ ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու նպատակով դիմող անձանցից պահանջվում էր ընդամենը հիմնավորել, որ նրանք՝ իրենց դատապարտման մասին արդյունավետ կերպով չէին տեղեկացվել: Նշվածի առնչությամբ հնարավոր էր շատ հեշտությամբ ապացույցներ տրամադրել, քանի որ գործերի մեծամասնության դեպքում նշվածը փաստացի մեղադրական դատավճռի ծանուցման եղանակի հետևանք էր: Դիմումատուները, առանց որևէ ապացույց ներկայացնելու, ընդամենը պետք է նշեին ժամանակին դատավճռի

մասին տեղեկացված չլինելու պատճառներն այն բողոքարկելու համար: Դատավարական այլ քայլերի մասին հավանաբար տեղեկացված լինելու փաստը կամ այն, որ նրանց ներկայացրած պատճառները հնարավոր էր նրանց ջանասիրության պակասի արդյունքն էին, չէր նշանակում, որ դիմումը ենթակա էր մերժման: Իրականում, բողոքարկման բաց թողնված ժամկետը կարող էր վերականգնվել նույնիսկ այն դեպքում, երբ դատավճիգ անտեղյակ լինելը նրանց մեղավորությունն էր: Նման դեպքերում, ժամկետանց բողոք բերելու թույլտվություն տալը բացառվում էր միայն, եթե նրանց փաստաբանն արդեն ներկայացրել էր բողոք (բացառություն, որը քննարկվող գործին չէր վերաբերում):

37. Դատապարտված անձի պնդումներին արձագանքելիս՝ դատախազությունից պահանջվում էր ապացույցներ ներկայացնել առ այն (դատարանների կողմից գնահատվելու համար), որ տվյալ անհատը փախուստի դիմած անձ էր և, հետևաբար, գիտակցաբար և դիտավորյալ խուսափել էր համապատասխան փաստաթղթերի ծանուցումից: Այլ կերպ ասած, որպեսզի ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմումը մերժվեր, նրանք պարտավոր էին ապացուցել, որ դատավճի վերաբերյալ ամբաստանյալի փաստաբանի ծանուցվելու դեպքում, ամբաստանյալի անտեղյակությունը ոչ միայն անփույթ էր, այլև՝ միտումնավոր: Դատախազությունը չէր կարող հիմնվել սոսկ ենթադրությունների վրա, որպեսզի ապացուցեր, որ ամբաստանյալի մեղքը դրսևորվել էր դիտավորությամբ:

2. Դիմումատուն

38. Դիմումատուն վիճարկել է Կառավարության փաստարկները: Նա պնդել է, որ իր գործը վերաբացելու որևէ հնարավորություն չի ունեցել և որ տեղեկացված չի եղել իրավական պաշտպանության ներպետական միջոցի գոյության մասին: Նա նաև անտեղյակ է եղել, որ ինքը համարվել է «փախուստի դիմած անձ», և որ նրա նկատմամբ քրեական վարույթ է նախաձեռնվել:

39. Դիմումատուն նկատել է, որ Հռոմի երդվյալ ատենակալների դատարանի կայացրած դատավճի վերաբերյալ երբևէ որևէ տեղեկություն չի ունեցել: Դատավճիքը երբեք չի հանձնվել նրան, քանի որ Գերմանիայում ձերբակալվելու ժամանակ նրա նկատմամբ ընդամենը կիրառվել է միջազգային ձերբակալման կարգադրությունը, որում նշված էր, որ նա դատապարտվել էր քսանմեկ տարի և ութ ամիս ժամկետով ազատազրկման: Ավելին, նա հնարավորություն չի ունեցել ապացուցելու, որ տեղյակ չի եղել գործի փաստական հանգամանքներից և իր նկատմամբ նախաձեռնված քրեական վարույթից:

Գ. Դատարանի գնահատականը

40. Դատարանը նկատում է, որ Կառավարության՝ իրավական պաշտպանության միջոցները չսպառելու առարկության հիմքում ընկած

է երկու բաղադրիչ, մասնավորապէս՝ ՔԴՕ 670-րդ և 175-րդ հոդվածներով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից դիմումատուի կողմից չօգտվելը:

41. Քանի որ Կառավարությունը վկայակոչել է այս դրույթներից առաջինը, Դատարանը կրկնում է, որ Դատարանի կանոնակարգի 55-րդ կանոնի համաձայն, ընդունելիության դեմ ցանկացած առարկություն պատասխանող պայմանավորվող կողմը պետք է բարձրացնի գանգատի ընդունելիության վերաբերյալ իր գրավոր կամ բանավոր դիրքորոշումներում (տե՛ս *K. and T. v. Finland* [ՄՊ], թիվ 25702/94, § 145, ՄԻԵԴ 2001-VII և *N.C. v. Italy* [ՄՊ], թիվ 24952/94, § 44, ՄԻԵԴ 2002-X): Սակայն գանգատի ընդունելիության վերաբերյալ ներկայացված դիրքորոշումներում Կառավարությունը չի վիճարկել, որ դիմումատուն կարող էր օգտված լինել ՔԴՕ 670-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության միջոցից: Ավելին, Դատարանը չի նկատում որևէ բացառիկ հանգամանք, որը կարող էր Կառավարությանն ազատած լինել իր նախնական առարկությունը ներկայացնելու պարտականությունից մինչև Պալատի կողմից գանգատի ընդունելիության վերաբերյալ 2003 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը կայացնելը (տե՛ս *Prokopovich v. Russia*, թիվ 58255/00, § 29, 18 նոյեմբերի 2004թ.):

42. Հետևաբար, վարույթի այս փուլում Կառավարությունը գրկվում է ՔԴՕ 670-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության ներպետական միջոցից չօգտվելու վերաբերյալ նախնական առարկություն ներկայացնելու հնարավորությունից (տե՛ս, *mutatis mutandis*, *Bracci v. Italy*, թիվ 36822/02, §§ 35-37, 13 հոկտեմբերի 2005թ.): Ուստի, Կառավարության նախնական առարկության այն մասը, որը վերաբերում է կատարման վերաբերյալ առարկություն չներկայացնելուն, ենթակա է մերժման:

43. Ինչ վերաբերում է ՔԴՕ 175-րդ հոդվածով նախատեսված իրավական պաշտպանության միջոցին, Դատարանը վերահաստատում է, որ իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնի նպատակը պայմանավորվող պետություններին՝ նրանց վերագրվող ենթադրյալ խախտումները կանխելու կամ վերացնելու հնարավորություն ընձեռելն է, մինչև այդ պնդումների Դատարան ներկայացվելը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Selmouni v. France* [ՄՊ], թիվ 25803/94, § 74, ՄԻԵԴ 1999-V և *Remli v. France*, 23 ապրիլի 1996թ., § 33, *Չեկոյցներ վճիռների և որոշումների վերաբերյալ* 1996-II): Այս կանոնի հիմքում ընկած է Կոնվենցիայի 13-րդ հոդվածում (որի հետ այն սերտորեն կապված է) արտացոլված այն ենթադրությունը, որ ներպետական իրավական համակարգում ենթադրյալ խախտման մասով հասանելի է իրավական պաշտպանության արդյունավետ միջոց (տե՛ս *Kudła v. Poland* [ՄՊ], թիվ 30210/96, § 152, ՄԻԵԴ 2000-XI): Այսպիսով, նշված սկզբունքի կարևոր ասպեկտն այն է, որ Կոնվենցիայով ամրագրված

պաշտպանության մեխանիզմը լրացնում է մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգերը (տե՛ս *Akdivar and Others v. Turkey*, 16 սեպտեմբերի 1996թ., § 65, *Reports* 1996-IV):

44. Մարդու իրավունքների պաշտպանության համակարգի համատեքստում իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառման կանոնն անհրաժեշտ է կիրառել որոշակի ճկունությամբ և առանց անհարկի ձևականությունների: Միաժամանակ, դրանով, որպես կանոն, պահանջվում է, որ բողոքները, որոնք հետագայում նախատեսվում է ներկայացնել միջազգային մակարդակում, առնվազն բովանդակային առումով և ներպետական օրենքով սահմանված ձևական պահանջների և ժամկետների պահպանմամբ հանձնված լինեն իրավասու ներպետական դատարանների քննությանը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Azinas v. Cyprus* [ՄԴ], թիվ 56679/00, § 38, ՄԻԵԴ 2004-III և *Fressoz and Roire v. France* [ՄԴ], թիվ 29183/95, § 37, ՄԻԵԴ 1999-I):

45. Սակայն 35-րդ հոդվածով ամրագրված պարտավորությամբ միայն պահանջվում է, որ դիմումատուն սահմանված կարգով օգտագործի իրավական պաշտպանության այն միջոցները, որոնք ամենայն հավանականությամբ արդյունավետ, բավարար և մատչելի կլինեն (տե՛ս *Sofri and Others v. Italy* (dec.), թիվ 37235/97, ՄԻԵԴ 2003-VIII): Կոնվենցիայով, մասնավորապես, պահանջվում է սպառել իրավական պաշտպանության միայն այն միջոցները, որոնք առնչվում են ենթադրյալ խախտումներին և միևնույն ժամանակ հասանելի և բավարար են: Իրավական պաշտպանության տվյալ միջոցների առկայությունը պետք է բավականաչափ որոշակի լինի ոչ միայն տեսականորեն, այլև՝ գործնականում, իսկ դրա բացակայությունը կհանգեցնի պահանջվող մատչելիության և արդյունավետության բացակայությանը (տե՛ս *Dalia v. France*, 19 փետրվարի 1998թ., § 38, *Հեկույցներ* 1998-I): Ավելին, ըստ «միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող կանոնների», կարող են լինել հատուկ հանգամանքներ, որոնցով դիմումատուներն ազատվեն իրենց տրամադրության տակ եղած՝ իրավական պաշտպանության ներպետական միջոցները սպառելու պարտավորությունից (տե՛ս *Aksoy v. Turkey*, 18 դեկտեմբերի 1996թ., § 52, *Հեկույցներ* 1996-VI): Սակայն, ակնհայտորեն անարդյունավետ չթվացող իրավական պաշտպանության կոնկրետ միջոցի հաջողության հեռանկարների վերաբերյալ պարզապես կասկածների գոյությունն իրավական պաշտպանության միջոցները չսպառելու հիմնավոր պատճառ չէ (տե՛ս *Sardinas Albo v. Italy* (dec.), թիվ 56271/00, ՄԻԵԴ 2004-I և *Brusco v. Italy* (dec.), թիվ 69789/01, ՄԻԵԴ 2001-IX):

46. Ի վերջո, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվում է ապացուցման բեռի բաշխում: Եթե Կառավարությունն է բարձրացնում իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու հարցը, այն պարտավոր է

Դատարանում ապացուցել, որ այդ միջոցը եղել է արդյունավետ և տվյալ ժամանակահատվածում տեսականորեն ու գործնականում հասանելի. այսինքն՝ այն եղել է մատչելի, դիմումատուին իր բողոքների մասով փոխհատուցում ստանալու հնարավորություն է տվել և երաշխավորել հաջողության հասնելու ողջամիտ հնարավորություն (տե՛ս վերևում մեջբերված *Akdivar and Others*, § 68):

47. Քննարկվող գործով Դատարանը նկատում է, որ ԶԴՕ 175-րդ հոդվածով նախատեսված՝ ժամկետի խախտմամբ բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմումի բավարարման դեպքում, բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնվում է, և առաջին ատյանի դատարանի կողմից հեռակա կարգով դատապարտված անձինք ձեռք են բերում իրենց բողոքի հիմքերն իրենց դեմ կայացված դատավճռի պատճառաբանման լույսի ներքո հիմնավորելու և այն փաստական և իրավական հիմքերը ներկայացնելու հնարավորություն, որոնք, ըստ իրենց, անհրաժեշտ են վերաքննիչ վարույթի շրջանակներում իրենց պաշտպանության համար: Սակայն քննարկվող գործի հատուկ հանգամանքներում, որոնցում դիմումատուին պաշտոնապես տրամադրված փաստաբանը ծանուցվել էր հեռակա կարգով կայացված դատավճռի մասին, այդ նպատակով ներկայացվող դիմումը կարող էր բավարարվել միայն երկու պայմանի բավարարման դեպքում՝ եթե դատապարտված անձը կարողանար ապացուցել, որ դատավճռի վերաբերյալ արդյունավետ կերպով չէր տեղեկացվել և եթե նա դիտավորյալ չէր խուսափել դատավարական քայլերն ի գիտություն ընդունելուց:

48. Թեպետ դիմումատուն կարող էր ապացուցել, որ առաջին պայմանը բավարարվել էր սոսկ այն պատճառով, որ նա իր դատապարտման մասին անձամբ չէր ծանուցվել մինչև դրա օրինական ուժի մեջ մտնելը, երկրորդ պայմանի առնչությամբ մոտեցումն այլ է: Դիմումատուն անհետացել էր պրն Ս.-ի սպանությունից անմիջապես հետո, որը տեղի էր ունեցել ականատես վկաների ներկայությամբ, որոնք մեղադրել էին նրան պատասխանատվության մեջ, և նշվածը կարող էր ստիպել Իտալիայի իշխանություններին եզրահանգել, որ նա դիտավորյալ փորձել էր խուսափել դատաքննությունից:

49. Կառավարությունը, հիմնվելով դիմումատուի ձերբակալման պահին գործող ԶԴՕ 175-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումների քերականական վերլուծության վրա, փորձ է կատարել Դատարանում ապացուցել, որ երկրորդ պայմանի ապացուցման բեռը չի դրվել դատապարտված անձի վրա: Այն պնդել է, որ ընդհակառակը, դատախազությունն էր պարտավոր ապացույցներ տրամադրել, եթե այդպիսիք կային, որոնց հիման վրա հնարավոր կլիներ եզրակացնել, որ մեղադրյալը միտումնավոր հրաժարվել էր առաջադրված մեղադրանքները և դատավճիռն ընդունել ի գիտություն: Այնուամենայնիվ, կարծես թե այս մեկնաբանությունը հերքվում է Հռոմի գլխավոր դատախազության տրամադրած գրությամբ, որում նշվում է.

«որպեսզի դատարանը համաձայնի կրկին քննել գործը, անհրաժեշտ է ապացուցել, որ մեղադրյալը սխալմամբ է համարվել որպես «փախուստի դիմած անձ»» (տե՛ս վերևում 18-րդ պարբերություն):

50. Ճիշտ է, որ Կառավարությունը Մեծ պալատին տրամադրել է ներպետական նախադեպեր, որոնցով հաստատվում է այդ մեկնաբանությունը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ միայն Վճռաբեկ դատարանի առաջին բաժանմունքի կողմից *Soldati* գործով կայացված վճռում է բացահայտորեն ամրագրվում, թե ինչպես պետք է բաշխվի ապացուցման բեռը դիմումատուի իրավիճակին համանման իրավիճակում: Այդ վճռում, որում քննարկվող հարցի առնչությամբ որևէ նախադեպ չի վկայակոչվում, կայացվել է 2004 թվականի նոյեմբերի 25-ին՝ Գերմանիայում դիմումատուի ձերբակալումից ավելի քան հինգ տարի անց (տե՛ս վերևում 17-րդ և 24-րդ պարբերություններ): Հետևաբար, կասկածներ կարող են առաջանալ այն կանոնի առնչությամբ, որը, պնդումների համաձայն, ենթակա էր կիրառման այն ժամանակ, երբ դիմումատուն պետք է օգտվեր ՔԴՕ 175-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության միջոցից:

51. Դատարանը կարծում է, որ երկրորդ պայմանի ապացուցման բեռի բաշխման առնչությամբ գոյություն ունեցող անորոշությունն այնպիսի գործոն է, որն անհրաժեշտ է հաշվի առնել Կառավարության վկայակոչած իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը գնահատելիս: Քննարկվող գործում Դատարանը համոզված չէ, որ ապացուցման բեռի առնչությամբ գոյություն ունեցող վերոնշյալ անորոշության արդյունքում՝ երբ դատարանը նման պահանջ ներկայացնել կամ դատախազությունը առարկել, դիմումատուն չէր բախվի լուրջ դժվարությունների այն հարցի վերաբերյալ համոզիչ բացատրություններ տրամադրելիս, թե ինչու էր նա պրն Ս.-ի սպանությունից կարճ ժամանակ անց լքել իր տունը և մեկնել Գերմանիա առանց հետադարձ հասցե թողնելու:

52. Հետևաբար, սույն գործի հատուկ հանգամանքներում, ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմումը հաջողության հեռանկար գրեթե չէր ունենա:

53. Բացի այդ, Դատարանը նպատակահարմար է գտնում քննության առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք իրավական պաշտպանության քննարկվող միջոցը գործնականում մատչելի էր դիմումատուի համար: Այդ առնչությամբ այն նկատում է, որ նա ձերբակալվել է 1999 թվականի սեպտեմբերի 22-ին՝ Գերմանիայում՝ պրն Ս.-ի սպանությունից յոթ տարուց փոքր ինչ ավելի անց (տե՛ս վերևում 11-րդ և 17-րդ պարբերություններ): Դատարանը խելամիտ է համարում նաև հավատալ, որ դիմումատուն, հանձնման նպատակով կալանքի տակ գտնվելիս, տեղեկացվել է իր ազատությունից զրկման պատճառների և, մասնավորապես, Իտալիայում իրեն դատապարտելու մասին: Ավելին, 2000 թվականի մարտի 22-ին՝ ձերբակալվելուց վեց ամիս անց, դիմումատուն՝ իր փաստաբանի միջոցով, գանգատ է

ներկայացրել Ստրասբուրգ, որով բողոք է ներկայացրել առ այն, որ իրեն դատապարտել էին հեռակա կարգով: Նրա փաստաթանը Դատարան է ներկայացրել Հռոմի երդվյալ ատենակալաների դատարանի կողմից 1996 թվականի հուլիսի 2-ին կայացված դատավճռից քաղվածքներ:

54. Հետևաբար, կարելի է համարել, որ Գերմանիայում ձերբակալվելուց կարճ ժամանակ անց դիմումատուն «արդյունավետ կերպով տեղեկացվել էր դատավճռի» մասին, և որ այդ պահից սկսած՝ ՔԴՕ 175-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, նա ընդամենը տասն օր էր ունեցել ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմում ներկայացնելու համար: Որևէ ապացույց չկա, որով կհաստատվի, որ նա տեղեկացվել էր իր նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորության և իրավական պաշտպանության այդ միջոցից օգտվելու համար հատկացված կարճ ժամկետի մասին: Դատարանը չպետք է նաև անտեսի այն դժվարությունները, որոնց այլ պետությունում կալանքի տակ գտնվող անձը հավանաբար կարող էր բախվել Իտալիայի օրենքներից տեղեկացված փաստաթանի հետ՝ իր գործի վերաբացման իրավական գործընթացի վերաբերյալ վերջինիցս տեղեկություններ ստանալու համար արագ կապ հաստատելիս՝ զուգահեռաբար իր փաստաթանին փաստերի ճշգրիտ շարադրանք և մանրամասն հանձնարարություններ տալով:

55. Դատարանը, իր ամփոփիչ վերլուծությամբ, կարծում է, որ քննարկվող գործում Կառավարության մատնանշած իրավական պաշտպանության միջոցը դատապարտված էր ձախողման, և դիմումատուն բախվել էր դրանից օգտվելու օբյեկտիվ խոչընդոտների: Ուստի, այն արձանագրում է, որ գոյություն ունեին հատուկ հանգամանքներ, որոնք ազատում էին դիմումատուին ՔԴՕ 175-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավական պաշտպանության միջոցից օգտվելու պարտականությունից:

56. Հետևաբար, Կառավարության նախնական առարկության երկրորդ բաղադրիչը, որը վերաբերում է ժամկետի խախտմամբ բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմում չներկայացնելուն, նույնպես ենթակա է մերժման:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

57. Դիմումատուն բողոք է ներկայացրել առ այն, որ ինքը դատապարտվել էր հեռակա կարգով՝ առանց Իտալիայի դատարաններում իրեն պաշտպանելու հնարավորության: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա, որի վերաբերելի հատվածներով սահմանվում է.

«1. Յուրաքանչյուր ոք ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ... ունի ... անաչառ դատարանի կողմից ... արդարացի ... դատաքննության իրավունք ...

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,

բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով:»:

Ա. Պալատի վճիռը

58. Պալատն արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Այն համարել է, որ չէր կարելի ասել, որ դիմումատուն, որը երբևէ պաշտոնապես չէր ծանուցվել նրա նկատմամբ նախաձեռնված վարույթի մասին, աներկբայորեն հրաժարվել էր իր գործի դատաքննությանը ներկայանալու իր իրավունքից: Ավելին, ներպետական օրենսդրությամբ նրան բավարար հստակությամբ չէր տրամադրվել գործի նոր քննությանը ներկայանալու հնարավորություն: Այդ հնարավորությունը կաշկանդված էր դատախազության կամ դատապարտված անձի կողմից ներկայացվող ապացույցներով, որոնք վերաբերում էին նրա՝ որպես փախուստի դիմած անձ հայտարարվելու հանգամանքներին և չէին բավարարում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները:

Բ. Կողմերի դիրքորոշումները

1. Կառավարությունը

59. Կառավարությունը նկատել է, որ Դատարանն արձանագրել էր Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում այն գործերում, որոնցում

ամբաստանյալի կողմից դատաքննությանը չներկայանալու հարցերը դեկլարվել էին քրեական դատավարության նախկին օրենսգրքով (այն մեջբերել է՝ *Colozza v. Italy*, 12 փետրվարի 1985թ., Շարք Ա թիվ 89, *T. v. Italy*, 12 հոկտեմբերի 1992թ., Շարք Ա թիվ 245-C և *F.C.B. v. Italy*, 28 օգոստոսի 1991թ., Շարք Ա թիվ 208-B): Այն պնդել է, որ դատավարական նոր կանոնները և պրն Սեյդովիչի գործի հատուկ հանգամանքները, այն առանձնացրել են այդ գործերից, որոնցում պատճառ կար կասկածելու, որ դիմումատուները դիտավորյալ կերպով փորձել էին խուսափել արդարադատությունից կամ որ նրանք դատաքննությանը մասնակցելու հնարավորություն էին ունեցել, կամ որ հիմքեր կային հավատալու, որ իշխանություններն անփույթ էին գտնվել մեղադրյալի գտնվելու վայրը պարզելու հարցում:

60. Նախկին համակարգի պայմաններում, ամբաստանյալը, որի գտնվելու վայրն անհայտ էր, համարվում էր փախուստի դիմած անձ և, եթե ծանուցումը պատշաճ կերպով հանձնվում էր, ժամկետանց բողոք բերելու հնարավորություն չէր տրամադրվում: Սակայն նոր ՔԴՕ-ով ներդրված համակարգի համաձայն, իշխանությունները պարտավոր էին վարույթի բոլոր փուլերում մանրակրկտորեն փնտրել մեղադրյալին, և բողոքարկման բաց թողնված ժամկետը կարող էր վերականգնել նույնիսկ, եթե ծանուցման մասով թերացումներ չէին եղել:

61. Քննարկվող գործում դատավարական քայլերի վերաբերյալ ծանուցումը հանձնվել էր դիմումատուի փաստաբանին, քանի որ դիմումատուն համարվում էր «փախուստի դիմած անձ» (*latitante*): Մինչև նրան այդպիսին ճանաչելը, իշխանությունները նրան փնտրել էին թափառականների ճամբարում, որտեղ ենթադրաբար նա ապրում էր:

62. Կառավարության դիրքորոշման համաձայն, գործի առանձնահատուկ հանգամանքները ցույց են տվել, որ դիմումատուն դիտավորյալ փորձել էր խուսափել դատաքննությունից: Այդ եզրահանգումը հիմնավորվել է մի շարք գործոններով, այն է՝ դիմումատուն գտնվել էր բարդ իրավիճակում, և դատաքննությանը չներկայանալը բխում էր նրա շահերից, նա որևէ ողջամիտ պատճառ չէր ներկայացրել, թե ինչու էր առանց հասցե կամ իր գտնվելու վերաբերյալ անգամ հետք թողնելու, տեղափոխվել իր մշտական բնակության վայրից այն սպանությունից անմիջապես հետո, որի պատասխանատուն, ըստ ականատես վկաների, նա էր, և մինչև Գերմանիայի ոստիկանության կողմից ձերբակալվելը, երբեք չէր հայտնվել ու չէր փորձել իր գործի վերանայման միջնորդություն ներկայացրել:

63. *Medenica v. Switzerland* (թիվ 20491/92, ՄԻԵԴ 2001-VI) գործով վճռից բխում էր, որ հեռակա կարգով դատապարտված անձի դատաքննությունից խուսափելու մտադրությունը բացառում էր Կոնվենցիայի լույսի ներքո գործի վերանայման իրավունքը: Կառավարությունն այդ առնչությամբ ընդգծել է, որ Դատարանը հաստատել է Շվեյցարիայի իշխանությունների այն տեսակետը, որ պրն

Մեղենիցայի գործով հեռակա կարգով իրականացված դատաքննությունն օրինական էր և, որ վարույթի վերաբացման կարիք չկար, քանի որ նա չէր կարողացել ներկայանալ իր մեղքով և չէր ներկայացրել հարգելի պատճառներ իր բացակայությունը արդարացնելու համար: Ավելին, ամբաստանյալի կողմից արդարադատությունից խուսափելու փորձ կատարելու կանխավարկածն անհերքելի չէր: Դատապարտված անձինք միշտ էլ կարող էին բացատրություններ տրամադրել՝ պնդելով, որ վարույթի մասին տեղեկացված չեն եղել և, հետևաբար, փախուստի դիմելու նպատակ չեն ունեցել, կամ վկայակոչելով որևէ իրավաչափ խոչընդոտ: Նման դեպքերում դատախազությունը պետք է փորձեր անհրաժեշտության դեպքում հակառակն ապացուցել, իսկ դատական մարմինները պետք է գնահատեին դատապարտված անձի բացատրությունների վերաբերելիությունը:

64. Ճիշտ էր, որ ի տարբերություն դիմումատուի, պրն Մեղենիցան պաշտոնապես ծանուցվել էր վարույթի և դատաքննության ամսաթվի մասին: Պալատը նշվածից ենթադրել էր, որ չէր կարելի ասել, որ դիմումատուն դատաքննությունից խուսափելու նպատակ էր ունեցել: Պալատի եզրահանգումը հիմնված էր *T. և F.C.B. v. Italy* (մեջբերված վերևում) գործերի վրա, որոնցում Դատարանը հրաժարվել էր որևէ կերպ կարևորել այն, որ դիմումատուներն անուղղակիորեն տեղեկացված էին կամ կարող էին տեղեկացված լինել նրանց նկատմամբ նախաձեռնված վարույթի և դատաքննության ամսաթվի մասին: Չնայած տվյալ ժամանակահատվածում Իտալիայում գործող օրենսդրության հաշվառմամբ Դատարանի անհարկի ձևականությունը և խստությունը հասկանալի էին վերոշարադրյալ երկու գործերում, դրանք անընդունելի էին այսօր:

65. Անհրաժեշտ է ընդունել, որ միայն ձևական ծանուցումը (ինչպես քննարկվող գործում, որում համապատասխան փաստաթղթերը հանձնվել էին պաշտոնապես նշանակված փաստաբանին) չէր կարող առաջացնել անհերքելի իրավական կանխավարկած առ այն, որ դիմումատուն տեղյակ էր վարույթի մասին: Սակայն, հակառակ կանխավարկածը նույնքան արդարացված չէր: Նշվածը կհանգեցներ այն փաստի ժխտմանը, որ մեղադրյալները հնարավոր է տեղյակ լինեին էին այն վարույթի մասին, որի շրջանակներում առկա էին նրանց մեղավորության և քննությունից թաքնվելու ապացույցներ (օրինակ, երբ հանցագործները փախուստի էին դիմել հանցագործության կատարումից անմիջապես հետո նրանց հետապնդող ոստիկաններից, կամ երբ ամբաստանյալները տրամադրել էին գրավոր հայտարարություն՝ նշելով իրենց մեղքի, տուժողների հանդեպ թույլ տված ոտնձգության և այն նպատակի մասին, որ իրենց գտնվելու վայրն անհայտ մնար): Կառավարության դիրքորոշման համաձայն, լոկ այն փաստը, որ դիմումատուն չէր ծանուցվել իր դատապարտման մասին, ինքնին բավարար ապացույց չէր, որ նա գործել էր բարեխղճորեն:

պահանջվում էին լրացուցիչ ապացույցներ իշխանությունների անփութության վերաբերյալ:

66. Ուստի նպատակահարմար կլիներ, ինչպես այն պնդել է, ավելի հավասարակշռված, տրամաբանական մոտեցում որդեգրելը, որը, առնվազն ժամանակավորապես, կարտահայտվեր այն ենթադրությամբ, որ մեղադրյալը թաքնվել էր քննությունից, եթե նման ոտնձգությունն արդարացված էր գործի հատուկ հանգամանքներով՝ հաշվի առնելով տրամաբանությունն ու սովորական փորձը և ջանալով նշվածը հիմնավորել կոնկրետ ապացույցներով: Մասնավորապես, անմեղության կանխավարկածը չէր խախտվում այն ենթադրությամբ, որ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձինք թաքնվել էին քննությունից, եթե ապացուցվել էր, որ նրանց գտնվելու վայրը հնարավոր չէր պարզել հանցագործության կատարումից անմիջապես հետո: Նման ենթադրությունն ամրապնդվում էր, եթե նրանք արդյունքում մեղավոր էին ճանաչվում դատաքննության ժամանակ ներկայացված ապացույցների հիման վրա և որևէ վերաբերելի բացատրություն չէին տալիս, թե ինչն էր ստիպել նրանց լքել իրենց բնակության հասցեն: Դիմումատուի գործում սա էլ տեղի էր ունեցել, որի շրջանակներում Հռոմի երդվյալ ատենակալների դատարանը խնամքով հաստատել էր փաստերը՝ իր եզրահանգումների հիմքում դնելով մի շարք ականատես վկաների ցուցմունքները:

67. Եթե ճանաչվեր, որ դիմումատուներն ունեին գործի վերանայման «բացարձակ» իրավունք «բոլոր այն դեպքերում», երբ նրանք պաշտոնապես չէին ծանուցվել առաջադրված մեղադրանքների և դատական նիստի ամսաթվի վերաբերյալ, պետությունը կգրկվեր հետևյալ պարզի փաստի, այն է՝ քրեական հետապնդման հարուցման մասին տեղեկություն ունենալու առնչությամբ ապացույցներ ներկայացնելու հնարավորությունից: Նշվածը, այնուամենայնիվ, կհակասեր դատական բոլոր վարույթներով հետապնդվող նպատակին, այն է՝ ճշմարտության բացահայտմանը, և կնշանակեր արդարադատությունից զրկում կամ տուժողներին լրացուցիչ տառապանքների պատճառում: Կարձանագրվեին նաև պարադոքսալ հետևանքներ, մասնավորապես՝ փախուստի դիմելու հարցում ավելի ճարպիկ և հմուտ ամբաստանյալները կստանային առավելություն այն ամբաստանյալների հանդեպ, որոնք հանկարծակիի էին եկել դատարան ներկայանալու նախնական ծանուցմամբ: Եթե նշվածը տեղի ունենար, միայն մեղադրյալները լիազորված կլինեին վերանայել իրենց սեփական գործերով իրականացված դատաքննության արդարացիությունը, և մեղավորները կհայտնվեին ավելի բարենպաստ դիրքում, քան՝ անմեղները: Ավելին, մարդիկ, որոնք փորձել էին խուսափել արդարադատությունից, ձեռք կբերեին մի իրավունք՝ «որը, ելնելով տրամաբանությունից և արդարության զգացումից, չպետք է պատկաներ նրանց», այն է՝ դատական գործերի ցանկում խառնաշփոթ

առաջացնելու և հետագա փուլում տուժողների և վկաների համար անհարմարություններ առաջացնելու իրավունքը:

68. Չպետք է մոռանալ նաև, որ Կառավարությունը պնդել է, որ *Poitrimol v. France* (23 նոյեմբերի 1993, Շարք Ա թիվ 277-A) և *Lala-ի և Pelladoah v. the Netherlands* (22 սեպտեմբերի 1994թ., Շարք Ա թիվ 297-A և 297-B) գործերում Դատարանը՝ դատարան ներկայանալու իրավունքը միացրել էր համապատասխան պարտավորությանը: Այն, համապատասխանաբար, ընդունել էր, որ պետք չէր խրախուսել անհիմն բացակայությունները, և որ պետություններն ունեին ամբաստանյալների վրա նրանց բացակայությունը հիմնավորելու բեռը դնելու և, այնուհետև, այդ բացատրությունների արժանահավատությունը գնահատելու իրավասություն: Ճիշտ էր, որ վերոշարադրյալ գործերում Դատարանն արձանագրել էր, որ ամբաստանյալների նկատմամբ կիրառված պատժամիջոցներն (փաստաբանի կողմից ներկայացվելու անհնարիությունը) անհամաչափ էին: Սակայն, այն անուղղակիորեն ընդունել էր, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը խախտված չէր լինի, եթե բացակա ամբաստանյալների իրավունքների սահմանափակումներով ապահովվեր արդարացի հավասարակշռություն:

69. Վերոշարադրյալ գործերում Դատարանը կարևորել էր նաև փաստաբանի կողմից իրականացվող պաշտպանությունը: Մասնավորապես, այն արձանագրել էր, որ մեղադրյալներին պաշտպանելու «կենսական» դերը պետք է գերակա լիներ նրանց կողմից դատաքննությանը ներկայանալու «գլխավոր» դերի հանդեպ: Ուստի, փաստաբանի ակտիվ մասնակցությունը բավարար էր ամբաստանյալի անհիմն բացակայությանը պետության կողմից տրված իրավաչափ արձագանքի և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների պահպանման միջև հավասարակշռությունը վերականգնելու համար:

70. Քննարկվող գործում Հռոմի երդվյալ ատենակալների դատարանում դիմումատուին ներկայացվել էր պաշտոնապես նշանակված փաստաբանի կողմից, որն արդյունավետորեն և պատշաճորեն իրականացրել էր նրա պաշտպանությունը՝ հրավիրելով մի շարք վկաների: Նույն փաստաբանը ներկայացրել էր նաև նույն վարույթի շրջանակներում ամբաստանյալի կարգավիճակով հանդես եկող այլ անձանց, որոնցից մի քանիսն արդարացվել էին:

71. Ցանկացած դեպքում, Կառավարությունը պնդել է, որ դիմումատուին Իտալիայի օրենսդրությամբ տրամադրվել էր գործի նոր քննությանը ներկայանալու իրական հնարավորություն: Այս առնչությամբ, հնարավոր էր դեպքերի զարգացման երկու առանձին տարբերակ: Եթե ծանուցումը չէր հանձնվել ձևական պահանջների պահպանմամբ, վարույթն առոչինչ էր և, ՔԴՕ 179-րդ և 670-րդ հոդվածների համաձայն, դատավճիռը, ըստ այդմ, ենթակա չէր կատարման:

71. Սակայն, եթե ծանուցումը հանձնվել էր ներպետական օրենսդրության պահպանմամբ, ինչպես տեղի էր ունեցել քննարկվող գործում, ՔԴՕ 175-րդ հոդվածը կիրառելի էր: Այդ առնչությամբ, Կառավարությունը վերահաստատել է նախնական առարկությանը վերաբերող իր դիրքորոշումը (տե՛ս վերևում՝ 32-37-րդ պարբերություններ) և ընդգծել, որ դիմումատուն պատկանում էր բնակչության այնպիսի խմբի, որին բնորոշ էր ավանդական թափառաշրջիկ մշակույթը, ինչի միջոցով կարելի էր բացատրել նրա բացակայությունն իր բնակության հասցեից:

72. Կառավարության պնդմամբ, ՔԴՕ 175-րդ հոդվածով նախատեսված համակարգը և դրանից բխող ապացուցողական կանոնները որևէ կերպ չէին հակասում այն ընդհանուր սկզբունքին, համաձայն որի ապացուցման բեռը կրում էր մեղադրողը և ոչ թե մեղադրյալը: *John Murray v. the United Kingdom* (8 փետրվարի 1996թ., *Չեկոյցներ* 1996-I) գործում Դատարանը համարել է, որ մեղադրյալներից բացատրություններ պահանջելը և նրանց լռությունից եզրակացություններ անելն իրավաչափ էր այն դեպքում, երբ հանգամանքներով ուղղակիորեն պահանջվում էր նման բացատրություններ տրամադրել: Եթե նշվածն ընդունելի էր մեղադրանքի էության դեպքում, ապա այն ավելի ընդունելի պետք է լիներ, երբ հերթը հասներ իր բնույթով դրվագային և դատավարական փաստի հաստատմանը, մասնավորապես՝ արդյոք դիմումատուի անտեղյակությունը միտումնավոր էր:

2. Դիմումատուն

73. Դիմումատուն պնդել է, որ իր՝ արդար դատաքննության իրավունքը խախտվել էր, քանի որ իրեն չէին տեղեկացրել առաջադրված մեղադրանքների մասին: Նա հայտարարել է, որ իրեն պաշտոնապես տրամադրված փաստաթանի կողմից իրականացված պաշտպանությունը չէր կարող համարվել արդյունավետ և համարժեք, քանի որ ներկա գտնված ամաքաստանյալները, որոնց ներկայացրել էր այդ փաստաթանը, արդարացվել էին, իսկ բացակայողները՝ դատապարտվել: Ավելին, դիմումատուն չէր իմացել, որ նրան ներկայացնում էր այդ փաստաթանը: Հետևաբար, նա որևէ պատճառ չէր ունեցել նրա կամ Իտալիայի իշխանությունների հետ կապ հաստատելու համար: Եթե նա իմացած լիներ, որ իրեն հանցագործության կատարման մեղադրանք էր առաջադրվել, նա կկարողանար տեղեկացված որոշում կայացնել իր իրավախորհրդատուի ընտրության հարցում:

74. Դիմումատուն պնդել է, որ Իտալիայի իշխանությունները ելել են այն կանխավարկածից, որ ինքը մեղավոր էր, քանի որ բացակա էր: Քանի որ նրա նկատմամբ նախաձեռնված վարույթը չէր համապատասխանել Կոնվենցիային, զուգահեռաբար խախտվել էր նրա անմեղ համարվելու իրավունքը: Չէր կարելի նաև եզրակացնել, որ նա

արդարադատությունից խուսափելու փորձ էր կատարել, երբ նա նույնիսկ չէր հարցաքննվել: Իշխանությունների նման միջամտությունն ավելի անհիմն էր, քանի որ ձերբակալման պահին նա՝ իր ընտանիքի հետ միասին օրինական հիմունքներով բնակվում էր Գերմանիայում, և նրա հասցեն գրանված էր ոստիկանությունում: Ցանկացած դեպքում, Կառավարությանը չէր հաջողվել ապացուցել, որ նա փախուստի էր դիմել իր նկատմամբ նախաձեռնված վարույթից խուսափելու նպատակով:

75. Ի վերջո դիմումատուն պնդել է, որ Իտալիայի իշխանությունների կողմից իր նույնականացումը անհստակ և կասկածելի էր, և իր քրեական գործը չէր պարունակում ո՛չ իր լուսանկարը, ո՛չ էլ մատնահետքերը:

Գ. Երրորդ կողմը

76. Սլովակիայի կառավարությունը նկատել է, որ *Medenica* գործում (մեջբերված վերևում) Դատարանն արձանագրել էր, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում տեղի չէր ունեցել, քանի որ դիմումատուն չէր կարողացել իր բացակայությունը հիմնավորելու համար հարգելի պատճառ ներկայացնել, և չէր եղել որևէ ապացույց, որը կհուշեր, որ նա բացակա էր եղել իր կամքից անկախ պատճառներով: Հետևաբար, նրան՝ իր գործի վերանայման իրավունք չտրամադրելը անհամաչափ արձագանք չէր եղել:

77. Եթե պաշտոնական ծանուցման բացակայության պայմաններում գործով նոր քննության իրավունքը համարվեր մեխանիկական, իրենց նկատմամբ քննության իրականացման մասին տեղեկացված անձինք ավելի քիչ երաշխիքներից կօգտվեին, քան նրանք, որոնց գտնվելու վայրն անհայտ էր դարձել հանցագործության կատարումից անմիջապես հետո: Միայն առաջին դեպքում Դատարանը թույլ կտար ներպետական իշխանություններին քննարկել այն հարցը, թե արդյոք դատապարտված անձն իրականում հրաժարվել էր արդար դատաքննության երաշխիքներից: Երկրորդ դեպքում նրանք չէին կարողանա փաստերով գնահատել ամբաստանյալի գտնվելու վայրի անհայտ լինելու պատճառները: Ամբաստանյալին, որը չէր ծանուցվել է, միշտ էլ վերաբերվելու էին որպես այնպիսի անձի, որի գտնվելու վայրն անհայտ էր նրա կամքից անկախ պատճառներով, այլ ոչ թե որպես այնպիսի անձի, որը խուսափել էր դատաքննությունից այն բանից հետո, երբ տեղեկացվել էր, որ իր նկատմամբ քրեական հետապնդում էր հարուցվել:

78. Սլովակիայի կառավարության դիրքորոշման համաձայն, կասկածելի էր, թե արդյոք նշվածը համապատասխանում էր *Colozza*-ի (մեջբերված վերևում) գործով հաստատված նախադեպին, որում Դատարանը մատնանշել էր, որ հեռակա կարգով իրականացվող բոլոր դատաքննություններն արգելվել կարող էր կաթվածահար անել

քրեական վարույթների ընթացքը, քանի որ կարող էր հանգեցնել, օրինակ՝ ապացույցների անհետացմանը, քրեական հետապնդում իրականացնելու ժամկետի սպառմանը կամ արդարադատության սխալին: Ավելին, վերոշարադրյալ տարբերակումը նշանակում էր, որ մարդիկ տարբեր իրավիճակներում կարժանանային նույն, իսկ համանման իրավիճակներում տարբերակված վերաբերմունքի առանց օբյեկտիվ կամ տրամաբանական հիմնավորման: Ուստի հետևանքներն անարդար կլինեին: Այդ առնչությամբ, Սլովակիայի կառավարությունը նկատել է, որ պրն Մեդենիցան կօգտվեր ավելի շատ իրավունքներից, եթե հանցագործության կատարումից անմիջապես հետո նրա գտնվելու վայրն անհայտ դառնար: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն փաստը, որ հանցագործության կատարման պահին բռնված մարդկանց երբեմն հաջողվել է փախուստի դիմել:

79. Սլովակիայի կառավարության դիրքորոշման համաձայն, իշխանությունները, առաջին հերթին, միշտ պետք է իրավունք ունենան գործի հատուկ հանգամանքների լույսի ներքո քննելու այն հարցը, թե ինչու էր անհնար հաստատել մեղադրյալների գտնվելու վայրը և, այնուհետև, որոշելու, որ նրանք հրաժարվել էին 6-րդ հոդվածով նախատեսված երաշխիքներից կամ արդարադատությունից խուսափելու փորձ էին կատարել: Վերջին դեպքում իրավաչափ կլիներ նրանց ներպետական օրենսդրությամբ սահմանված գործի նոր քննության իրավունք չտրամադրելը՝ հաշվի առնելով հասարակության գերակա շահերը և քրեական հետապնդման նպատակներին հասնելու հարցը: Այդ դեպքում, Դատարանի խնդիրը կլիներ ապահովել, որ ներպետական իշխանությունների եզրահանգումները չլինեին կամայական կամ հիմնված ակնհայտ սխալ ենթադրությունների վրա:

Դ. Դատարանի գնահատականը

1. Հեռակա դատաքննությանը վերաբերող ընդհանուր սկզբունքները

(ա) Դատական նիստին մասնակցելու և նոր քննության հնարավորություն ստանալու իրավունքը

80. Թեպետ 6-րդ հոդվածի 1-ին կետում ուղղակիորեն նշված չէ, այդ հոդվածի առարկայից և նպատակից ընդհանուր առմամբ բխում է, որ «քրեական հանցագործության կատարման մեջ մեղադրվող» անձը դատական նիստին ներկա գտնվելու իրավունք ունի: Ավելին, 3-րդ կետի «գ», «դ» և «ե» ենթակետերով «քրեական հանցագործության կատարման մեջ մեղադրվող» յուրաքանչյուր անձի համար երաշխավորվում են հետևյալ իրավունքները՝ «պաշտպանելու իրեն անձամբ», «հարցաքննելու վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության» և «օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում

գործավոր լեզուն կամ չի խոսում այդ լեզվով» և դժվար է պատկերացնել, թե ինչպես նա կարող է իրականացնել այս իրավունքներն առանց ներկա լինելու (տե՛ս վերևում մեջբերված *Colozza*, § 27, վերևում մեջբերված *T. v. Italy*, § 26, վերևում մեջբերված *F.C.B. v. Italy*, § 33 և *Belziuk v. Poland*, 25 մարտի 1998թ., § 37, *Չեկոյցներ* 1998-II):

81. Թեպետ մեղադրյալի բացակայությամբ տեղի ունեցող դատական քննությունն ինքնին անհամատեղելի չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, այնուամենայնիվ, տեղի է ունենում արդարադատությունից զրկում, երբ հեռակա կարգով դատապարտված անձն անկարող է հետազայում իրեն լսած դատարանից հասնել մեղադրանքի էության վերաբերյալ նոր քննության անցկացման՝ և՛ իրավունքի, և՛ փաստի մասով, եթե չի հաստատվել, որ նա հրաժարվել էր դատաքննությանը ներկա գտնվելու և իրեն պաշտպանելու իրավունքից (տե՛ս վերևում մեջբերված *Colozza*, § 29, *Einhorn v. France* (dec.), թիվ 71555/01, § 33, ՄԻԵԴ 2001-XI, *Krombach v. France*, թիվ 29731/96, § 85, ՄԻԵԴ 2001-II և *Somogyi v. Italy*, թիվ 67972/01, § 66, ՄԻԵԴ 2004-IV) կամ, որ նա ունեցել էր դատաքննությունից խուսափելու դիտավորություն (տե՛ս վերևում մեջբերված *Medenica*, § 55):

82. Կոնվենցիայով պայմանավորվող պետություններին շնորհվում է հայեցողության լայն շրջանակ այն միջոցներն ընտրելու հարցում, որոնք միտված են ապահովելու նրանց իրավական համակարգերի համապատասխանությունը 6-րդ հոդվածի պահանջներին: Դատարանի խնդիրն է որոշել, թե արդյոք Կոնվենցիայով սահմանված վերջնարդյունքը կյանքի կոչվել է: Մասնավորապես, պետք է ապացուցել, որ ներպետական օրենսդրությամբ և պրակտիկայով առաջարկվող դատավարական միջոցներն արդյունավետ են այն դեպքում, երբ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը ո՛չ հրաժարվել է դատարան ներկայանալու և իրեն անձամբ պաշտպանելու իրավունքից, ո՛չ էլ դատաքննությունից խուսափելու փորձ է արել (տե՛ս վերևում մեջբերված *Somogyi*, § 67):

83. Ավելին, Դատարանն արձանագրել է, որ թե՛ սկզբնական դատավարության ժամանակ, թե՛ կրկին քննության դեպքում քրեական գործով ամբաստանյալի՝ դատական նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքն ապահովելու պարտականությունը 6-րդ հոդվածի կարևորագույն պահանջներից է (տե՛ս *Stoichkov v. Bulgaria*, թիվ 9808/02, § 56, 24 մարտի 2005թ.): Հետևաբար, մեղադրյալի բացակայությամբ իրականացված վարույթը վերաբացելու մերժումը, առանց որևէ նշում կատարելու, որ մեղադրյալը հրաժարվել էր դատաքննությանը ներկա գտնվելու իր իրավունքից, համարվել է որպես «արդարադատությունից կոպտորեն զրկել»՝ վարույթը դարձնելով «6-րդ հոդվածի դրույթներին կամ դրանով ամրագրված սկզբունքներին ակնհայտորեն հակասող» (նույն տեղում, §§ 54-58):

84. Դատարանը նաև արձանագրել է, որ հեռակա կարգով դատապարտման բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելը, ինչի դեպքում ամբաստանյալը վերաքննիչ դատարանում դատական նիստին մասնակցելու և նոր ապացույցներ թույլատրելու պահանջ ներկայացնելու իրավունք էր ունենում, ենթադրում էր քրեական մեղադրանքին փաստական և իրավական նոր գնահատական տալու հնարավորություն, որպեսզի վարույթը, որպես մեկ ամբողջություն, հնարավոր լիներ համարել արդար (տե՛ս *Jones v. the United Kingdom* (dec.), թիվ 30900/02, 9 սեպտեմբերի 2003թ.):

(բ) Դատաքննությանը ներկայանալու իրավունքից հրաժարվելը

85. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ո՛չ տառը, ո՛չ էլ ոգին անհատի համար խոչընդոտ չեն սեփական հոժար կամքով ուղղակիորեն կամ լռելյայն արդար դատաքննության երաշխիքներից հրաժարվելու համար (տե՛ս *Kwiatkowska v. Italy* (dec.), թիվ 52868/99, 30 նոյեմբերի 2000թ.): Այնուամենայնիվ, որպեսզի նման հրաժարումը Կոնվենցիայի իմաստով արդյունավետ լինի, դատաքննությանը մասնակցելու իրավունքից հրաժարվելը պետք է աներկբայորեն հաստատված լինի և ուղեկցվի դրա կարևորությանը համարժեք նվազագույն երաշխիքներով (տե՛ս, վերևում մեջբերված *Poitrimol*, § 31): Դրանից զատ, այն պետք է չհակասի որևէ կարևոր հանրային շահի (տե՛ս *Håkansson and Stureson v. Sweden*, 21 փետրվարի 1990թ., § 66, Շաբթ Ա թիվ 171-A):

86. Դատարանն արձանագրել է, որ երբ հանցագործության մեջ մեղադրվող անձը չէր ծանուցվել անձամբ, նրա՝ «փախուստի դիմած անձի» (*latitante*) կարգավիճակից, որի հիմքում եղել է բավարար փաստական հիմքեր չունեցող կանխավարկած, չէր կարող բխեցվել, որ մեղադրյալը հրաժարվել էր դատաքննությանը ներկայանալու և իրեն պաշտպանելու իրավունքից: (տե՛ս վերևում մեջբերված *Colozza*, § 28). Այն նաև առիթ է ունեցել ընդգծելու, որ մինչև հնարավոր լինի արձանագրել, որ մեղադրյալը, իր վարքագծով, անուղղակիորեն հրաժարվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված որևէ կարևոր իրավունքից, պետք է ապացուցել, որ նա ողջամտորեն կանխատեսել է իր վարքագծի հնարավոր հետևանքները (վերևում մեջբերված *Jones*):

87. Ավելին, քրեական իրավախախտման մեջ մեղադրվող անձը չպետք է պարտավորված լինի ապացուցել, որ ինքը չէր փորձում խուսափել արդարադատությունից, կամ որ իր բացակայությունը պայմանավորված է եղել ֆորսմաժորային հանգամանքով (տե՛ս վերևում մեջբերված *Colozza*, § 30): Միևնույն ժամանակ, ներպետական մարմիններն ազատ են գնահատելու, թե արդյոք մեղադրյալն իր բացակայությունը հիմավորել է հարգելի պատճառներով, կամ թե արդյոք գործի նյութերում եղել են փաստեր, որոնց հիման վրա կարելի էր եզրակացնել, որ նա բացակայել է իր կամքից անկախ պատճառներով (տե՛ս վերևում մեջբերված *Medenica*, § 57):

(գ) Հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի՝ իրեն ներկայացված մեղադրանքների մասին տեղեկացվելու իրավունքը

88. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով ամրագրված դրույթների համաձայն, հանցագործության կատարման մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք իրավունք ունի «իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին»: Այս դրույթով ընդգծվում է մեղադրյալի «մեղադրանքի» մասին ծանուցելուն հատուկ ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը: Մեղադրական եզրակացությունն առանցքային դեր է խաղում քրեական վարույթում, քանի որ այն հանձնելու պահից է, որ մեղադրյալը պաշտոնապես ծանուցվում է իրեն առաջադրված մեղադրանքների փաստական և իրավական հիմքերի մասին (տե՛ս *Kamasinski v. Austria*, 19 դեկտեմբերի 1989, § 79, Շարք Ա թիվ 168):

89. Վերոշարադրյալ դրույթի կիրառության շրջանակը պետք է գնահատվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության առավել ընդհանուր իրավունքի լույսի ներքո: Քրեաիրավական հարաբերություններում մեղադրյալին առաջադրված մեղադրանքի և, արդյունքում, տվյալ հարցին դատարանի հավանական իրավական որակման մասին ամբողջական, մանրամասն տեղեկատվության տրամադրումը, կարևոր նախապայման է վարույթի արդարությունն ապահովելու համար (տե՛ս *Pélissier and Sassi v. France* [ՄԳ], թիվ 25444/94, § 52, ՄԻԵԴ 1999-II):

(դ) Ամբաստանյալների, որոնց գործով իրականացվում է հեռակա դատաքննություն, իրենց պաշտպանի կողմից ներկայացված լինելը

90. Հանցագործության կատարման մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի՝ անհրաժեշտության դեպքում պաշտոնապես տրամադրված փաստաբանի միջոցով արդյունավետորեն պաշտպանվելու իրավունքը, անկախ այն հանգամանքից, որ բացարձակ չէ, արդար դատաքննության հիմնարար հատկանիշներից է (տե՛ս վերևում մեջբերված *Poitrimol*, § 34): Հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը չի գրկվում այս իրավունքից օգտվելու հնարավորությունից դատաքննությանը սուկ ներկա չգտնվելու պատճառով (տե՛ս *Mariani v. France*, թիվ 43640/98, § 40, 31 մարտի 2005թ.): Մեղադրյալի արդյունավետ պաշտպանությունը թե՛ առաջին ատյանի, թե՛ վերաքննիչ դատարաններում կենսական նշանակություն ունի քրեական արդարադատության համակարգի արդար լինելու համար (տե՛ս վերևում մեջբերված *Lala*, § 33 և վերևում մեջբերված *Pelladoah*, § 40):

91. Միևնույն ժամանակ, ամբաստանյալի ներկայանալը կենսական նշանակություն ունի, թե՛ նրա դատաքննության իրավունքի, թե՛ նրա ցուցմունքների ճշմարտացիությունը ստուգելու և դրանք տուժողների, որոնց շահերն անհրաժեշտ է պաշտպանել, և վկաների ցուցմունքների հետ համադրելու կարիքի պատճառով: Հետևաբար, օրենսդիրը պետք է

անհարգելի բացակայությունն ապախրախուսելու հնարավորություն ունենա պայմանով, որ կիրառվող ցանկացած պատժամիջոց անհամաչափ չլինի տվյալ գործի հանգամանքներում, և ամբաստանյալը չգրկվի փաստաբանի միջոցով իր պաշտպանությունն իրականացնելու իրավունքից (տե՛ս վերևում մեջբերված *Krombach*, §§ 84, 89 և 90, *Van Geyseghem v. Belgium* [ՄՊ], թիվ 26103/95, § 34, ՄԻԵԴ 1999-I և վերևում մեջբերված *Poitrimol*, § 35):

92. Դատարանները պետք է ապահովեն դատաքննության արդար լինելը, և, ըստ այդմ, որ մեղադրյալի բացակայության պայմաններում նրան պաշտպանելու ակնհայտ նպատակի համար դատաքննությանը մասնակցող պաշտպանը նշվածն անելու հնարավորություն ստանա (տե՛ս վերևում մեջբերված *Van Geyseghem*, § 33, վերևում մեջբերված *Lala*, § 34 և վերևում մեջբերված *Pelladoah*, § 41):

93. Թեպետ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով քրեական իրավախախտման կատարման մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի տրամադրվում է «իրեն անձամբ կամ դատապաշտպանների միջոցով պաշտպանելու ...» իրավունք, դրանով չի հստակեցվում այդ իրավունքի իրացման եղանակը: Հետևաբար, պայմանավորվող պետությունները պետք է կատարեն այն միջոցների ընտրությունը, որոնք կապահովեն այդ իրավունքի պաշտպանվածությունն իրենց դատական համակարգերում, իսկ Դատարանի խնդիրն է պարզել, թե արդյոք նրանց կողմից ընտրված մեթոդը համապատասխանում է արդար դատաքննության պահանջներին (տե՛ս *Quaranta v. Switzerland*, 24 մայիսի 1991թ., § 30, Շարք Ա թիվ 205): Այս առնչությամբ անհրաժեշտ է հիշել, որ Կոնվենցիայի նպատակն է «երաշխավորել ոչ թե տեսական կամ պատրանքային իրավունքներ, այլ իրավունքներ, որոնք գործնական և արդյունավետ են», և փաստաբան նշանակելն ինքն իրենով չի ենթադրում այն օգնության արդյունավետությունը, որ նա կարող է տրամադրել մեղադրյալին (տե՛ս *Imbrioscia v. Switzerland*, 24 նոյեմբերի 1993թ., § 38, Շարք Ա թիվ 275 և *Artico v. Italy*, 13 մայիսի 1980թ., § 33, Շարք Ա թիվ 37):

94. Այնուամենայնիվ, պետությունը չի կարող պատասխանատվություն կրել անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով նշանակված կամ մեղադրյալի կողմից ընտրված փաստաբանի յուրաքանչյուր թերացման համար: Իրավաբանի մասնագիտության պետությունից անկախ լինելու հանգամանքից բխում է, որ պաշտպանության իրականացմանն առնչվող հարցերն ըստ էության լուծվում են ամբաստանյալի և նրա ներկայացուցչի միջև, անկախ այն հանգամանքից, թե նա նշանակվել է որպես հանրային պաշտպան, թե ֆինանսավորվում է մասնավոր միջոցներով (տե՛ս *Cuscani v. the United Kingdom*, թիվ 32771/96, § 39, 24 սեպտեմբերի 2002թ.): 6-րդ հոդվածի 3-րդ կետի «գ» ենթակետով ներպետական իրավասու մարմիններից պահանջվում է միջամտել միայն այն դեպքում, երբ անվճար իրավաբանական օգնություն

տրամադրելու նպատակով նշանակված փաստաբանն ակնհայտ անարդյունավետ է ներկայացնում մեղադրյալի շահերը, կամ երբ այդ հանգամանքն այլ կերպ՝ բավարար չափով, ներկայացվել է նրանց ուշադրությանը (տե՛ս *Daud v. Portugal*, 21 ապրիլի 1998թ., § 38, *Ձեկույցներ* 1998-II):

2. *Վերոշարադրյալ սկզբունքների կիրառումն սույն գործի նկատմամբ*

95. Դատարանը նկատում է, որ քննարկվող գործում 1992 թվականի հոկտեմբերի 15-ին Հռոմի՝ Նախաքննության հարցերով մասնագիտացած դատավորը կայացրել է դիմումատուի նկատմամբ նախնական կալանք նշանակելու մասին որոշում: Քանի որ նրա գտնվելու վայրն անհայտ էր, նա համարվել է «փախուստի դիմած անձ» (*latitante*) (տե՛ս վերևում՝ 12-րդ պարբերություն): Նրան ներկայացնելու համար նշանակվել է փաստաբան, որը ծանուցվել է դատավարական տարբեր քայլերի, ներառյալ՝ դիմումատուի դատապարտման մասին: Կառավարությունը չի վիճարկել, որ դիմումատուի գործով դատաքննությունն իրականացվել էր հեռակա կարգով, և որ նա առաջադրված մեղադրանքների կամ իր գործով դատաքննության ամսաթվի մասին մինչև ձերբակալվելը պաշտոնական որևէ տեղեկատվություն չէր ստացել:

96. Հիմնվելով վերևում մեջբերված *Medenica* գործով մշակված նախադեպային իրավունքի վրա՝ Կառավարությունը, այնուամենայնիվ, պնդել է, որ դիմումատուն գրկվել էր իր գործի նոր քննության իրավունքից, քանի որ արդարադատությունից խուսափելու փորձ էր կատարել կամ, այլ կերպ ասած, իմացել էր կամ կասկածել, որ հետախուզվում էր ոստիկանության կողմից, և թաքնվել:

97. Դատարանը, նախևառաջ, նկատում է, որ քննարկվող գործը տարբերվում է *Medenica* գործից (մեջբերված վերևում՝ § 59-ում), որի շրջանակներում դիմումատուն ժամանակին տեղեկացվել էր իր նկատմամբ նախաձեռնված վարույթի և իր գործով դատաքննության ամսաթվի մասին: Նա նաև օգտվել էր իր ընտրած փաստաբանի օգնությունից և նրա հետ կապի մեջ եղել: Ի վերջո, Դատարանը եզրահանգել է, որ պրն Մեդենիցայի բացակայությունը նրա մեղավորության հետևանքն էր և համաձայնել Շվեյցարիայի դաշնային դատարանի հետ, որ նա շփոթեցրել էր ամերիկյան դատարանին՝ երկիմաստ և նույնիսկ գիտակցաբար սխալ ցուցմունքներ տալով, ինչի նպատակն այնպիսի որոշման հասնելն էր, որն անհնարին կդարձներ նրա մասնակցությունն իր գործի դատաքննությանը (նույն տեղում՝ § 58): Հետևաբար, նրա իրավիճակը միանգամայն այլ էր, քան քննարկվող գործով դիմումատուինը: Քննարկվող գործի հատուկ հանգամանքներում հարց է առաջանում, թե արդյոք կարելի է համարել, որ պրն Մեդեովիչը, եթե նրան պաշտոնական ծանուցում չէր հանձնվել, բավարար չափով տեղեկացված էր իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման և իր գործով դատաքննության մասին, որպեսզի

կարողանար հրաժարվել դատարան ներկայանալու իր իրավունքից կամ խուսափել արդարադատությունից:

98. Հեռակա դատապարտմանն առնչվող նախկին գործերում Դատարանն արձանագրել է, որ որևէ մեկին նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին տեղեկացնելն այնպիսի կարևորության իրավական ակտ է, որը պետք է կյանքի կոչվի այնպիսի դատավարական և նյութական պահանջների համաձայն, որոնք ունակ են ապահովել մեղադրյալի իրավունքների արդյունավետ կենսագործումը. անորոշ և ոչ պաշտոնական տեղեկությունները բավարար չեն կարող լինել (տե՛ս վերևում մեջբերված *T. v. Italy*, § 28, և վերևում մեջբերված *Somogyi*, § 75): Սակայն Դատարանը չի կարող բացառել, որ հնարավոր է հաստատված որոշ փաստեր կկարողանան աներկբայորեն վկայել, որ մեղադրյալը տեղյակ է նրա նկատմամբ նախաձեռնված քրեական վարույթի և նրան ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին ու դատաքննությանը մասնակցելու մտադրություն չունի կամ ցանկանում է խուսափել քննությունից: Օրինակ՝ այդպես կարող է լինել, երբ մեղադրյալը հրապարակայնորեն կամ գրավոր հայտարարի, որ մտադիր չէ պատասխանել դատական ծանուցումներին, որոնց մասին տեղեկացել է ոչ թե իշխանություններից, այլ՝ այլ աղբյուրներից, կամ նրան հաջողվի խուսափել ձերբակալությունից (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Iavarazzo v. Italy* (dec.), թիվ 50489/99, 4 դեկտեմբերի 2001թ.), կամ երբ իշխանություններին հանձնվեն նյութեր, որոնք աներկբայորեն վկայում են այն մասին, որ նա տեղյակ է իր նկատմամբ նախաձեռնված վարույթից և ներկայացված մեղադրանքներից:

99. Դատարանի կարծիքով, քննարկվող գործով այդպիսի հանգամանքներ չեն հաստատվել: Կառավարության փաստարկը հիմնված չէ որևէ օբյեկտիվ գործոնի վրա, բացի դիմումատուի՝ իր մշտական բնակության վայրից բացակա լինելուց, որը դիտարկվել էր նրա դեմ առկա ապացույցների լույսի ներքո. դրանից ենթադրվում է, որ դիմումատուն ներգրավված էր պրն Ս.-ի սպանության մեջ կամ իրականում այդ սպանության պատասխանատուն էր: Հետևաբար, Դատարանը չի կարող ընդունել այս փաստարկը, որը հակասում է նաև անմեղության կանխավարկածին: Օրենքով սահմանված կարգով դիմումատուի մեղքի հաստատումն այն քրեական վարույթի նպատակն էր, որը դիմումատուի՝ որպես փախուստի դիմած անձ համարվելու պահին գտնվում էր նախաքննության փուլում:

100. Այդ հանգամանքներում Դատարանը կարծում է, որ չի ապացուցվել, որ դիմումատուն բավարար տեղեկություն է ունեցել իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման և առաջադրված մեղադրանքների մասին: Ուստի, այն չի կարող եզրահանգել, որ նա դատաքննությունից խուսափելու փորձ էր կատարել կամ աներկբայորեն հրաժարվել էր դատարան ներկայանալու իր իրավունքից: Մնում է պարզել, թե արդյոք ներպետական

օրենսդրությամբ նրան բավարար հստակությամբ տրամադրվել էր գործի նոր քննությանը ներկայանալու հնարավորություն:

101. Կառավարությունն այդ առնչությամբ առաջին հերթին հղում է կատարել ՔԴՕ 670-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության միջոցին: Դատարանը, նախևառաջ, նկատում է, որ այն արձանագրել էր, որ Կառավարությունը գրկվում է այս դրույթի հիմքով իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ նախնական առարկություն ներկայացնելու հնարավորությունից (տե՛ս վերևում՝ 42-րդ պարբերություն): Սակայն նման եզրահանգումը խոչընդոտ չէ, որպեսզի Դատարանը Կառավարության կողմից վկայակոչված իրավական պաշտպանության միջոցը հաշվի առնի բողոքն ըստ էության քննելիս (տե՛ս, *mutatis mutandis*, վերևում մեջբերված *N.C. v. Italy*, §§ 42-47 և 53-58): Այն նշում է, որ Իտալիայի օրենսդրության համաձայն, կատարման առնչությամբ ներկայացված առարկությունն ընդունելի է միայն, եթե հաստատվել է, որ վարույթի ընթացքում արձանագրվել է այնպիսի թերություն, հատկապես, այն ամբաստանյալներին տրվող դատական ծանուցումների կանոնների խախտման առնչությամբ, որոնց գտնվելու վայրն անհայտ է, որն ունակ է հանգեցնել դատավճռի առոչինչ լինելուն (տե՛ս վերևում՝ 31-րդ և 71-րդ պարբերություններ): Սակայն Կառավարությունն ինքն է ընդունել, որ քննարկվող գործում ծանուցումը հանձնվել էր ներպետական օրենսդրության պահպանմամբ (տե՛ս վերևում՝ 72-րդ պարբերություն): Ուստի, դիմումատուի կողմից ՔԴՕ 670-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության միջոցից օգվելը հաջողության ոչ մի հեռանկար չէր ունենալու:

102. Քանի որ Կառավարությունը հղում է կատարել ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու համար դիմումատուի կողմից դիմում ներկայացնելու հնարավորությանը, Դատարանը կսահմանափակվի նախնական առարկության առնչությամբ արված իր դիտարկումները վերահաստատելով (տե՛ս վերևում՝ 47-56-րդ պարբերություններ): Այն ևս մեկ անգամ նշում է, որ ՔԴՕ 175-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված իրավական պաշտպանության միջոցը, դիմումատուի ձերբակալման և հանձնման նպատակով կալանավորման ժամանակ գործող խմբագրությամբ, դատապարտված էր ձախողման, և գոյություն ունեին օբյեկտիվ խոչընդոտներ, որպեսզի նա օգտվեր դրանից: Մասնավորապես, դիմումատուն կրախվեր լուրջ բարդությունների ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու իրավական նախապայմաններից մեկը բավարարելիս, այն է՝ ապացուցելիս, որ նա դիտավորյալ չէր հրաժարվել դատավարական քայլերն ի գիտություն ընդունելուց կամ չէր փորձել խուսափել դատաքննությունից: Դատարանը նաև արձանագրել է, որ այդ նախապայմանի ապացուցման բեռնի բաշխման առնչությամբ, հնարավոր է, եղել էր անորոշություն (տե՛ս վերևում՝ 49-51-րդ պարբերություններ): Հետևաբար, կասկած է առաջանում, թե

արդյոք ապահովվել էր դիմումատուի այն իրավունքը, համաձայն որի նա պարտավոր չէր ապացուցել, որ դատաքննությունից խուսափելու դիտավորություն չէր ունեցել: Հնարավոր է, երբ դատարանը նման պահանջ ներկայացներ կամ դատախազությունն առարկեր, դիմումատուն չկարողանար տրամադրել համոզիչ բացատրություններ, թե ինչու էր նա պրն Ս.-ի սպանությունից կարճ ժամանակ անց լքել իր տունը և մեկնել Գերմանիա առանց հետադարձ հասցե թողնելու: Ավելին, դիմումատուն, որը, կարելի էր համարել, «դատավճռի մասին անհրաժեշտ տեղեկություններ» էր ստացել Գերմանիայում ձերբակալվելուց կարճ ժամանակ անց, ընդամենը տասն օր էր ունեցել ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմում ներկայացնելու համար: Որևէ ապացույց չկա, որով կհաստատվի, որ նա տեղեկացվել էր իր նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու հնարավորության և իրավական պաշտպանության այդ միջոցից օգտվելու համար հատկացված կարճ ժամկետի մասին: Այս հանգամանքները՝ զուգակցված այն դժվարությունների հետ, որոնց այլ պետությունում կալանքի տակ գտնվող անձը հավանաբար կարող էր բախվել Իտալիայի օրենքներից տեղեկացված փաստաբանի հետ արագ կապ հաստատելիս և նրան փաստերի ճշգրիտ շարադրանք ու մանրամասն հանձնարարություններ տրամադրելիս, դիմումատուի կողմից ԶԴՕ 175-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավական պաշտպանության միջոցից օգտվելու համար օբյեկտիվ խոչընդոտներ են առաջացրել (տե՛ս վերևում 53-55-րդ պարբերություններ):

103. Հետևաբար, ԶԴՕ 175-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության միջոցը բավարար հստակությամբ չէր երաշխավորում, որ դիմումատուն կունենար գործի նոր քննությանը ներկայանալու և իրեն պաշտպանելու հնարավորություն: Դատարանում չի վիճարկվել, որ դիմումատուին հասանելի էր բողոքարկման բաց թողնված ժամկետը վերականգնելու կամ նոր քննության հասնելու որևէ այլ միջոց:

3. Եզրահանգում

104. Վերոշարադրյալի լույսի ներքո Դատարանը կարծում է, որ դիմումատուն, որի գործով դատաքննությունն իրականացվել էր հեռակա կարգով և որի կողմից դատաքննությունից դիտավորյալ խուսափելը չէր ապացուցվել, կամ որը աներկբայորեն չէր հրաժարվել դատարան ներկայանալու իր իրավունքից, հնարավորություն չէր ունեցել, որ իրեն ներկայացված մեղադրանքների էությանը կրկին անդրադառնար այն դատարանը, որը նրան կլսեր իր պաշտպանության իրավունքների համաձայն:

105. Հետևաբար, քննարկվող գործում տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

106. Այս եզրահանգումը վերացնում է Դատարանի կողմից դիմումատուի այն պնդումներին անդրադառնալու անհրաժեշտությունը, որոնց համաձայն նրա փաստաբանի կողմից իրականացված պաշտպանությունը թերի էր, իսկ Խտալիայի իշխանությունների կողմից նրա նույնականացումը՝ անհստակ և կասկածելի:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 46-ՐԴ ԵՎ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ

Ա. Կոնվենցիայի 46-րդ հոդվածը

107. 46-րդ հոդվածով սահմանվում է.

«1. Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են:

2. Դատարանի վերջնական վճիռն ուղարկվում է Նախարարների կոմիտե, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ:»:

1. Պալատի վճիռը

108. Պալատը վճռել է, որ իր կողմից արձանագրված խախտման աղբյուրը ներպետական օրենսդրության և պրակտիկայի թերություններից բխող համակարգային խնդիր էր, որի պատճառն այնպիսի արդյունավետ մեխանիզմի բացակայությունն էր, որը կապահովեր հեռակա կարգով դատապարտված անձանց՝ իրենց ներկայացված մեղադրանքներին այն դատարանի կողմից կրկին ըստ էության անդրադառնալու իրավունքը, որը գործը կքննել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջների համաձայն, եթե նրանք արդյունավետորեն չէին տեղեկացվել իրենց նկատմամբ նախաձեռնված վարույթի մասին և աներկբայորեն չէին հրաժարվել դատաքննությանը ներկայանալու իրենց իրավունքից: Ըստ այդմ, այն արձանագրել է, որ պատասխանող պետությունը պարտավոր էր ապահովել դիմումատուի և նրա իրավիճակին համանման իրավիճակում գտնվող անձանց քննարկվող իրավունքը՝ ձեռնարկելով համարժեք միջոցներ:

2. Կառավարության դիրքորոշումը

109. Կառավարությունը պնդել է, որ եթե Դատարանը դեռ համոզված էր, որ տեղի էր ունեցել խախտում, այն պետք է եզրահանգեր, որ խախտման միակ աղբյուրը տվյալ գործի հատուկ հանգամանքներին (այլ կերպ ասած՝ դիմումատուի անձնական իրավիճակին) վերաբերող

պատճառներն էին՝ առանց կասկածի տակ առնելու Իտալիայի՝ տվյալ խնդրին վերաբերող ամբողջ օրենսդրությունը:

110. Նրանք առարկել են, որ Իտալիայի համակարգն ամբողջությամբ համապատասխանում էր Կոնվենցիայի՝ Դատարանի կողմից մատնանշված պահանջներին և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Մեղադրյալի բացակայությամբ իրականացվող վարույթների դեկավար չափանիշների մասին» (75) 11 Բանաձևով թվարկված բոլոր սկզբունքներին: Այդ համակարգով պահանջվում էր գործադրել անհրաժեշտ բոլոր ջանքերը երաշխավորելու համար, որ մեղադրյալները տեղեկացվեին իրենց նկատմամբ նախաձեռնված վարույթի, առաջադրված մեղադրանքների բնույթի և դատավարության ընթացքում ձեռնարկվող անհրաժեշտ քայլերի ամսաթվի ու վայրի մասին: Ավելին, հեռակա կարգով դատապարտված անձանց տրամադրվում էր ժամկետանց բողոք բերելու ավելի լայն հնարավորություն, քան եվրոպական այլ պետություններում, եթե նրանք կարողանային ապացուցել, որ դատավճռի մասին որևէ տեղեկություն չէին ունեցել: Այդ կանոնից միակ բացառությունը, որը վերաբերելի էր քննարկվող գործում, արձանագրվում էր այն դեպքում, երբ հաստատվել էր, որ դատապարտված անձինք, որոնց գտնվելու վայրն անհայտ էր կամ որոնք փախուստի էին դիմել, դիտավորյալ փորձել էին խուսափել դատաքննությունից:

111. Ավելին, եթե նույնիսկ համարենք, որ տվյալ ժամանակահատվածում գործող Իտալիայի օրենսդրությունը չէր համապատասխանում կոնվենցիոն պահանջներին, ցանկացած հնարավոր թերություն վերացվել էր թիվ 60/2005 օրենքով կատարված բարեփոխմամբ:

112. Կառավարությունն ընդգծել է, որ Դատարանի կողմից ներպետական իրավական համակարգում կառուցվածքային թերության արձանագրման դեպքում, հեռակա կարգով դատապարտված անձանց գործի նոր քննության հնարավորություն տալու պարտականությունը կարող էր անհնարին դարձնել սկզբնական դատաքննության շրջանակներում ձեռք բերված բոլոր ապացույցների (մասնավորապես՝ վկաների ցուցմունքների) հավաքումը: Նման հանգամանքներում ներպետական իշխանությունները կունենային երկու այլընտրանք: Նրանք կարող էին օգտագործել սկզբնական վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցները և ցուցմունքները (թեպետ նշվածը կարող էր հանգեցնել մեղադրյալի՝ այն անձանց ցուցմունքների հիման վրա չդատապարտվելու իրավունքի խախտմանը, որոնց հարցաքննելու հնարավորություն նա երբեք չէր ունեցել), կամ արդարացնել մեղադրյալին անկախ բավարար ապացույցների առկայությունից, որոնք ողջամիտ կասկածից վեր կհամոզեին դատարանին, որ նա մեղավոր էր (ինչը կհանգեցներ

Կոնվենցիայով երաշխավորված՝ այլ իրավունքների պաշտպանության պոզիտիվ պարտականության հավանական խախտմանը):

113. Հետևաբար, Կառավարության պնդմամբ, նպատակահարմար կլիներ, որ Դատարանը պարզաբաներ, թե ինչ ընթացք պետք է ունենար երկրորդ վարույթը. մասնավորապես՝ արդյոք ամբաստանյալին հարցաքննելը բավարար էր, արդյոք ողջ դատաքննությունը պետք է նորից ընթանար, կամ արդյոք ավելի հավասարակշռված և միջանկյալ լուծումներն էին ցանկալի: Այդպիսով Դատարանը պատասխանող պետությանն ավելի հստակ և մանրակրկիտ ցուցումներ տալու հնարավորություն կունենար այն հարցի վերաբերյալ, թե ինչպես պետք է երաշխավորվեր ներպետական օրենսդրության և պրակտիկայի համապատասխանությունը Կոնվենցիային:

114. Կառավարությունը հայտարարել է, որ այն սկզբունքորեն դեմ չէր, որպեսզի Դատարանը բավարար չափով մանրակրկիտ ցուցումներ տար այն ընդհանուր միջոցառումների առնչությամբ, որոնք անհրաժեշտ էր ձեռնարկել: Սակայն Դատարանի նոր գործելակերպը սպառնում էր չեղարկել այն սկզբունքը, համաձայն որի պետություններն ազատ էին վճռի կատարմանը միտված միջոցառումների ընտրության հարցում: Այն նաև հակասում էր Կոնվենցիայի ոգուն և չունեի հստակ իրավական հիմք:

115. Դատարանի վճիռները հիմնականում դեկլարատիվ բնույթ էին կրում: Կոնվենցիայի 41-րդ հոդվածը միակ բացառությունն էր այդ կանոնից, որը Դատարանին լիազորում էր նշանակել այն, ինչը հանգեցնում էր պայմանավորվող պետությունների նկատմամբ «պատիժների»: Սակայն 46-րդ հոդվածով ոչ մի այդպիսի դրույթ չէր նախատեսվում, այլ ընդամենը նշվում էր, որ Դատարանի վերջնական վճիռը փոխանցվում էր Նախարարների կոմիտե դրա կատարման ընթացքը վերահսկելու համար: Հետևաբար, Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի միակ մարմինն էր, որը լիազորված էր ասելու, թե արդյոք ընդհանուր որևէ միջոցառում անհրաժեշտ էր, համարժեք և բավարար:

116. Կառավարության դիրքորոշման համաձայն, լիազորությունների այդ տարանջատումը հաստատվել էր թիվ 14 Արձանագրության 16-րդ հոդվածով, որով, Կոնվենցիայի 46-րդ հոդվածում կատարված փոփոխությունների արդյունքում, ներդրվել էր իրավական պաշտպանության երկու նոր միջոց. դրանք են՝ մեկնաբանության խնդրանքը և խախտման վարույթը: Բացատրական գեկույցի համաձայն, այս միջոցներից առաջինի նպատակն էր «Դատարանին վճիռը մեկնաբանելու, այլ ոչ թե բարձր պայմանավորվող կողմի՝ վճռի կատարման նպատակով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ արտահայտվելու հնարավորություն տալը»: Ինչ վերաբերում է երկրորդ միջոցին, նշվել է, որ Դատարանի կողմից խախտում արձանագրվելու դեպքում, այն պետք է գործը փոխանցի Նախարարների կոմիտե «այն միջոցառումները քննարկելու համար,

որոնք անհրաժեշտ է ձեռնարկել»։ Ի վերջո, Res(2004)3 Բանաձևով Նախարարների կոմիտեն Դատարանին հրավիրել է վճիռներում վեր հանել համակարգային խնդիրները, սակայն զուգահեռաբար չնշել համապատասխան լուծումները։ Հետևաբար, Կոնվենցիան մշակողների կողմից նախատեսված լիազորությունների բաշխումը Դատարանի և Նախարարների կոմիտեի միջև չէր փոխվել։

117. Ցանկացած դեպքում, եթե նախատեսվում էր շարունակել ընդհանուր միջոցառումները մատնանշելու գործելակերպը, այն նվազագույնը պետք է ամրագրվեր Դատարանի կանոնակարգով կամ Դատարանի կողմից կողմերին առաջադրվող հարցերում, որպեսզի կողմերը հնարավորություն ունենային դիրքորոշումներ ներկայացնել առ այն, թե արդյոք խախտումը «համակարգային» բնույթ կրում էր։

3. Դատարանի գնահատականը

118. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի համաձայն՝ բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են՝ Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ, կատարել Դատարանի վերջնական վճիռները ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են։ Հետևաբար, Դատարանի խախտում արձանագրող վճռով պատասխանող պետության վրա, ի թիվս այլնի, դրվում է ոչ միայն 41-րդ հոդվածի հիմքով որպես արդարացի հատուցում սահմանված գումարը շահագրգիռ անձանց վճարելու, այլև Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ այն ընդհանուր և (կամ), ըստ անհրաժեշտության, անհատական միջոցառումները որոշելու իրավական պարտականություն, որոնք անհրաժեշտ է իրականացնել ներպետական օրենսդրությամբ Դատարանի կողմից արձանագրված խախտումը և դրա հետևանքները հնարավորինս վերացնելու համար։ Պատասխանող պետությունը՝ Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո, ազատ է ընտրելու այն միջոցառումները, որոնց միջոցով այն կատարելու է Կոնվենցիայի 46-րդ հոդվածով սահմանված իր իրավական պարտականությունը՝ պայմանով, որ այդ միջոցառումները համատեղելի լինեն Դատարանի վճռում արված եզրահանգումների հետ։ (տե՛ս *mutatis mutandis*, *Scozzari and Giunta v. Italy* [ՄՊ], թիվ 39221/98 և 41963/98, § 249, ՄԻԵԴ 2000-VIII)։

119. *Broniowski v. Poland* ([ՄՊ], թիվ 31443/96, §§ 188-94, ՄԻԵԴ 2004-V) գործում Դատարանը համարել է, որ եթե այն արձանագրել է մեծաթիվ աձանց վրա ազդեցություն ունեցող այնպիսի խախտում, որը բխում էր համակարգային որևէ խնդրից, ներպետական մակարդակում հնարավոր է պահանջվեր, որ վճիռների կատարման ընթացքում ձեռնարկվեին ընդհանուր միջոցառումներ։ Ներպետական իրավական համակարգում առկա համակարգային կամ կառուցվածքային խնդիրների հարցում Դատարանի որդեգրած դատական այդպիսի մոտեցումը նկարագրվել է որպես «պիլոտային վճիռների ընթացակարգ» [“pilot-judgment procedure”]։ Այս ընթացակարգի

հիմնական նպատակն է աջակցել պայմանավորվող պետություններին կոնվենցիոն համակարգում իրենց դերակատարման հարցում՝ այդ խնդիրների վերաբերյալ ներպետական մակարդակում լուծումներ առաջարկելով՝ այդպիսով, ինչպես պանաջվում է Կոնվենցիայի 1-ին հոդվածով, ապահովելով շահագրգիռ անձանց կոնվենցիոն իրավունքներն ու ազատությունները, ավելի արագ հատուցում առաջարկելով և թեթևացնելով Դատարանի բեռը, որը հակառակ դեպքում ստիպված կլիներ կայացնել վճիռներ համանման առարկա ունեցող մեծածավալ գանգատների վերաբերյալ (տե՛ս *Broniowski v. Poland* (բարեկամական կարգավորում) [ՄԴ], թիվ 31443/96, §§ 34-35, ՄԻԵԴ 2005-IX):

120. Դատարանը նկատում է, որ քննարկվող գործում դիմումատուի՝ առաջադրված մեղադրանքների վերաբերյալ դատարանի կողմից ըստ էության նոր քննության անցկացման իրավունքի անհիմն խոչընդոտը, կարծես թե, տվյալ ժամանակահատվածում գործող ՔԴՕ-ով սահմանված այն դրույթների ձևակերպման արդյունքն էր, որոնք վերաբերում էին ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու համար դիմելուն: Նշվածից կարելի էր ենթադրել, որ Իտալիայի իրավական համակարգում առկա էր այնպիսի թերություն, որի արդյունքում ցանկացած անձի, որն արդյունավետորեն չէր տեղեկացվել իր նկատմամբ նախաձեռնված վարույթի մասին, կարելի էր մերժել գործի կրկին քննության հնարավորություն ընձեռելը:

121. Սակայն չպետք է մոռանալ, որ դիմումատուի գործով իրականացված դատաքննությունից հետո Իտալիայում իրականացվել են իրավական տարբեր բարեփոխումներ: Մասնավորապես, թիվ 60/2005 օրենքով փոփոխություններ են կատարվել ՔԴՕ 175-րդ հոդվածում: Նոր դրույթների համաձայն, բողոքարկման բաց թողնված ժամկետը կարող է վերականգնվել դատապարտված անձի խնդրանքով: Այս կանոնից միակ բացառությունը հնարավոր է, եթե մեղադրյալներն «արդյունավետ կերպով տեղեկացված» են եղել իրենց նկատմամբ նախաձեռնված վարույթի կամ իրենց դեմ կայացված դատավճռի վերաբերյալ և դիտավորյալ հրաժարվել են ներկայանալուց կամ դատավճիռը բողոքարկելուց: Ավելին, դիմումատուի իրավիճակին համանման իրավիճակում գտնվող անձանց տրամադրվող՝ ժամկետանց բողոք բերելու թույլտվություն ստանալու դիմումի ներկայացման ժամկետը տասն օրից երկարացվել էր երեսուն օրվա և ներկայումս սկսում է հոսել այն պահից, երբ մեղադրյալները հանձնավում են Իտալիայի իշխանություններին (տե՛ս վերևում՝ 26-27-րդ պարբերություններ):

122. Ճիշտ է, որ այս նոր դրույթները չէին կիրառվում դիմումատուի կամ նրա իրավիճակին համանման իրավիճակում գտնվող որևէ այլ անձի նկատմամբ, որը իր դատապարտման մասին արդյունավետ տեղեկություն էր ունեցել կամ հանձնվել էր Իտալիայի իշխանություններին թիվ 60/2005 օրենքի ուժի մեջ մտնելուց ավելի քան

երեսուն օր առաջ: Դատարանը կարծում է, որ այս փուլում՝ թիվ 60/2005 օրենքով սահմանված դրույթների կիրառմանն առնչվող ներպետական նախադեպերի բացակայության պայմաններում, վաղաժամ կլիներ քննության առարկա դարձնել այն հարցը, թե արդյոք վերոշարադրյալ բարեփոխումները հասել էին Կոնվենցիայով պահանջվող արդյունքի:

123. Հետևաբար, Դատարանը նպատակարար չի համարում մատնանշել որևէ ընդհանուր միջոցառում, որի անհրաժեշտությունը կարող էր առաջանալ ներպետական մակարդակում վճռի կատարման ընթացքում:

124. Ավելին, Դատարանը նկատում է, որ Պալատի կազմով ընդդեմ Թուրքիայի գործերով կայացված վճիռներում, որոնք վերաբերում էին ազգային անվտանգության դատարանների անկախությանն ու անաչառությանը, այն արձանագրել է, որ, սկզբունքորեն, հատուցման ամենանպատակահարմար եղանակը կլիներ դիմումատուին գործի կրկին քննության հնարավորություն տալն առանց ձգձգումների, եթե նա նման պահանջ ներկայացներ (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Gençel v. Turkey*, թիվ 53431/99, § 27, 23 հոկտեմբերի 2003թ. և *Tahir Duran v. Turkey*, թիվ 40997/98, § 23, 29 հունվարի 2004թ.): Անհրաժեշտ է նաև նշել, որ համանման մոտեցում էր որդեգրվել Իտալիայի դեմ ներկայացված այն գործերում, որոնցում Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդարության պահանջների խախտումը դատաքննությանը մասնակցելու իրավունքի (տե՛ս վերևում մեջբերված *Somogyi*, § 86 և *R.R. v. Italy*, թիվ 42191/02, § 76, 9 հունիսի 2005թ.) կամ մեղադրանքի կողմի վկաներին հարցաքննելու իրավունքի ոտնահարման արդյունք էր (տե՛ս վերևում մեջբերված *Bracci*, § 75): Մեծ պալատը հաստատել է վերևում մեջբերված գործերով որդեգրված ընդհանուր մոտեցումը (տե՛ս *Öcalan v. Turkey* [ՄԳ], թիվ 46221/99, § 210, ՄԻԵԴ 2005-IV):

125. Հետևաբար, Դատարանը կարծում է, որ եթե անհատը դատապարտվել է այնպիսի վարույթի արդյունքում, որի շրջանակներում տեղի են ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված պահանջների խախտումներ՝ ինչպես քննարկվող գործում, գործի կրկին քննությունը կամ վերաբացումը, նման խնդրանքի առկայության դեպքում, իրենից, սկզբունքորեն, ներկայացնում է խախտման վերացմանը միտված պատշաճ եղանակ (տե՛ս Նախարարների կոմիտեի թիվ R (2000) 2 հանձնարարականով սահմանված սկզբունքները, որոնք նշված են 28-րդ պարբերությունում): Սակայն, խախտման վերացմանը միտված միջոցները, եթե այդպիսիք պահանջվում են պատասխանող պետությունից Կոնվենցիայիով սահմանված իր պարտավորությունները կատարելու համար, պետք է պայմանավորված լինեն գործի հատուկ հանգամանքներով և որոշվեն տվյալ գործով Դատարանի կայացրած վճռի լույսի ներքո՝ ինչպես նաև հաշվի առնելով Դատարանի՝ վերևում մեջբերված նախադեպային իրավունքը (տե՛ս *Öcalan*՝ նույն տեղում):

126. Մասնավորապես, Դատարանի խնդիրը չէ նշել, թե ինչպես պետք է ընթանա նոր քննությունը կամ ինչ ձև պետք է այն ընդունի: Պատասխանող պետությունը՝ Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ, ազատ է ընտրելու այն միջոցները, որոնց օգնությամբ այն կկատարի դիմումատուին, հնարավորինս, այն իրավիճակում դնելու իր պարտավորությունը, որում նա կլիներ, եթե կոնվենցիոն պահանջները չխախտվեին (տե՛ս *Piersack v. Belgium* (հոդված 50), 26 հոկտեմբերի 1984թ., § 12, Շարք Ա թիվ 85)՝ պայմանով, որ այդ միջոցները համատեղելի լինեն Դատարանի վճռում արված եզրահանգումների և պաշտպանության կողմի իրավունքների հետ (տե՛ս *Lyons and Others v. the United Kingdom* (dec.), թիվ 15227/03, ՄԻԵԴ 2003-IX):

Բ. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը

127. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով սահմանվում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

1. Վնասը

128. Դիմումատուն նկատել է, որ 1999 թվականի սեպտեմբերի 22-ից նոյեմբերի 22-ն ընկած ժամանակահատվածում, որը կազմել է վաթսուներկու օր, ինքը գտնվել էր հանձնման նպատակով կալանքի տակ Գերմանիայում: Եթե Իտալիայի իշխանությունները փորձեին նրա հետ կապ հաստատել Գերմանիայում նրա գրանցման հասցեով, նա ազատությունից չէր գրկվի: Նա պնդել է, որ իրեն՝ կալանքի արդյունքում պատճառված վնասի և անհարմարության համար պետք է յուրաքանչյուր օրվա դիմաց տրամադրվեր 100 եվրո և, ըստ այդմ, պահանջել ընդհանուր առմամբ 6,200 եվրո գումար:

129. Կառավարությունը նկատել է, որ դիմումատուն չի ապացուցել, որ Կոնվենցիայի խախտման և նրա պնդած վնասի միջև եղել է որևէ պատճառահետևանքային կապ: Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, միայն խախտման արձանագրմամբ բավարար արդարացի հատուցում կտրամադրվեր:

130. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն արդարացի հատուցում կշնորհի միայն, եթե ենթադրյալ կորուստը կամ վնասն իր կողմից արձանագրված խախտման հետևանք լինեին, իսկ պետությունից չի ակնկալվում վճարել այն վնասի համար, որը նրան վերագրելի չէ (տե՛ս *Perote Pellon v. Spain*,

թիվ 45238/99, § 57, 25 հուլիսի 2002թ. և վերևում մեջբերված *Bracci*, § 71):

131. Դատարանը քննարկվող գործում արձանագրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, քանի որ դիմումատուն, որը հեռակա կարգով էր դատապարտվել, չէր կարողացել իր գործը վերաբացել: Այն որևէ թերություն չի նկատել դիմումատուի գտնվելու վայրը պարզելու համար գործադրված ջանքերի մասով և չի կարող եզրահանգել, որ Իտալիայի իշխանություններին անհրաժեշտ է պատասխանատվության ենթարկել հանձնման նպատակով նրա կալանքի համար: Բացի այդ, դիմումատուն չի մեջբերել որևէ տեղեկատվություն, որը Իտալիայի իշխանություններին հիմքեր կտար կասկածելու, որ նա Գերմանիայում էր:

132. Հետևաբար, Դատարանը նպատակահարմար չի համարում դիմումատուին նյութական վնասի դիմաց հատուցում շնորհելը: Իր կողմից արձանագրված խախտման և դիմումատուի բողոքի առարկա հանդիսացող կալանքի միջև որևէ պատճառահետևանքային կապ չի հաստատվել:

133. Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, Դատարանը կարծում է, որ, գործի հատուկ հանգամանքների հաշվառմամբ, միայն խախտման արձանագրումն իրենից ներկայացնում է բավարար արդարացի հատուցում (տե՛ս *Brozicek v. Italy*, 19 դեկտեմբերի 1989թ., § 48, Շարք Ա թիվ 167, վերևում մեջբերված *F.C.B. v. Italy*, § 38 և վերևում մեջբերված *T. v. Italy*, § 32):

2. Ծախսերը և ծախքերը

134. Դիմումատուն պահանջել է փոխհատուցել Գերմանիայում հանձնման վարույթի շրջանակներում կրած ծախսերը՝ 4,827.11 եվրոյի չափով: Այնուհետև, նա պահանջել է 7,747.94 եվրո՝ Դատարանի վարույթի շրջանակներում կրած ծախսերի դիմաց: Մասնավորապես, նա պնդել է, որ 3,500.16 եվրո գումարի չափով ծախսերը (որոնք ներառում էին 3,033.88 եվրո՝ տուրքերի և 466.28 եվրո՝ թարգմանությունների մասով) կատարվել էին Պալատի վարույթի շրջանակներում, իսկ Մեծ պալատում հետագա վարույթի ծախսերը՝ ներառյալ իր փաստաբանի մասնակցությունը 2005 թվականի հոկտեմբերի 12-ի դատական լուսմներին, կազմել էին 4,247.78 եվրո:

135. Կառավարությանը չի հաջողվել պատճառահետևանքային կապ տեսնել Կոնվենցիայի խախտման և Գերմանիայում կրած ծախսերի միջև: Ինչ վերաբերում է Ստրասբուրգում տեղի ունեցած վարույթների շրջանակներում կատարվածներին, Կառավարությունը հարցը թողել է Դատարանի հայեցողությանը՝ միևնույն ժամանակ նշելով, որ դիմումատուի գործը պարզ էր: Բացի այդ, այն պնդել է, որ Մեծ պալատի վարույթի շրջանակներում կատարված ծախսերի համար պահանջված գումարը չափազանցված էր՝ հաշվի առնելով այս փուլում դիմումատուի

փաստաբանից պահանջված աշխատանքի փոքր ծավալը, որը հուշագիր չէր ներկայացրել:

136. Դատարանը նկատում է, որ մինչև կոնվենցիոն մարմիններ դիմելը դիմումատուին ստիպված էր եղել մասնակցել Գերմանիայում տեղի ունեցած հանձնման վարույթին, որի շրջանակներում բարձրացվել էր նրա գործի վերաբացման անհնարինության հարցը: Ուստի, այն ընդունում է, որ դիմումատուին կրել է այնպիսի ծախսեր, որոնք կապված էին կոնվենցիոն խախտմանն առնչվող վարույթի հետ: Այնուամենայնիվ, այն համարում է չափազանցված գերմանական դատարանների վարույթների համար պահանջված գումարները (տե՛ս, *mutatis mutandis*, *Sakkopoulos v. Greece*, թիվ 61828/00, § 59, 15 հունվարի 2004թ. և *Cianetti v. Italy*, թիվ 55634/00, § 56, 22 ապրիլի 2004թ.): Իր տրամադրության ներքո առկա տեղեկատվության և վերաբերելի պրակտիկայի հաշվառմամբ՝ Դատարանը ողջամիտ է համարում դիմումատուին այս մասով շնորհել 2,500 եվրո գումար:

137. Դատարանը նույնքան չափազանցված է համարում իր վարույթների շրջանակներում կրած ծախսերի և ծախքերի համար պահանջված գումարը (7,747.94 եվրո) և որոշում է այս մասով շնորհել 5,500 եվրո: Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ դիմումատուի փաստաբանը Մեծ պալատին չի ներկայացրել գրավոր առարկություններ (տե՛ս վերևում՝ 8-րդ պարբերություն): Ուստի, կատարված ծախսերի և ծախքերի դիմաց դիմումատուին շնորհվող գումարի ընդհանուր չափը 8,000 եվրո է:

3. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

138. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ, ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. *մերժում է* Կառավարության նախնական առարկությունը.
2. *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում.
3. *վճռում է*, որ միայն խախտման արձանագրումն իրենից բավարար արդարացի հատուցում է ներկայացնում դիմումատուի կրած ոչ նյութական վնասի համար.
4. *վճռում է՝*

(ա) որ պատասխանող պետությունը, երեք ամսվա ընթացքում, դիմումատուին պետք է վճարի 8,000 եվրո (ութ հազար եվրո) որպես ծախսերի և ծախքերի հատուցում՝ գումարած գանձման ենթակա ցանկացած հարկ,

(բ) որ վերոնշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը, վերոնշյալ գումարների նկատմամբ պետք է հաշվարկվի պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ փոխառության առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային միավոր.

5. *մերժում է* դիմումատուի՝ արդարացի հատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով ու ֆրանսերենով և հրապարակվել է դռնբաց դատական նիստի ընթացքում՝ 2006 թվականի մարտի 1-ին Ստրասբուրգում՝ Մարդու իրավունքների պալատում:

Լոուրենս Ըրլի
Քարտուղարի տեղակալ

Լուգիուս Վայդհաբեր
Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ մասի համաձայն՝ վճռին կցվում է դատավոր Մուլարոնիի՝ դատարանի մեծամասնության դիրքորոշմանը համընկնող կարծիքը:

Լ.Վ. [L.W.]
Թ. Լ. Ը. [T.L.E.]

ԴԱՏԱՎՈՐ ՄՈՒԼԱՐՈՆԻԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

(թարգմանություն)

Թեպետ ես համաձայն եմ մեծամասնության այն կարծիքին, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, կցանկանայի ընդգծել հետևյալը:

1. Դիմումատուի կողմից քրեական դատավարության օրենսգրքի 175-րդ հոդվածով սահմանված իրավական պաշտպանության միջոցից չօգտվելու առնչությամբ Կառավարության ներկայացրած նախնական առարկության մասով պետք է ընդգծեմ, որ, հաշվի առնելով Դատարանի կողմից վճռի 52-րդ, 55-րդ, 103-րդ և 104-րդ պարբերություններում օգտագործված փոքր ինչ տարբեր արտահայտությունները, համոզված չեմ, որ իրավական պաշտպանության այս միջոցը դատապարտված էր ձախողման: Ես քվեարկել եմ մեծամասնության հետ՝ արձանագրելով, որ գործի հատուկ հանգամանքները դիմումատուին ազատել էին իրավական պաշտպանության քննարկվող միջոցը սպառելու պարտականությունից, և որ, հետևաբար, այդ մասով Կառավարության ներկայացրած նախնական առարկությունը ենթակա էր մերժման: Թեպետ ես ընդունում եմ, որ իրավական պաշտպանության այս միջոցի հաջողության հեռանկարների առնչությամբ անորոշության կար, ես այնուամենայնիվ հանգել եմ այս եզրահանգմանը՝ հիմք ընդունելով վճռի 54-րդ պարբերությամբ վկայակոչված օբյեկտիվ խոչընդոտները: Եթե այդ խոչընդոտները չլինեին, ես, հիմք ընդունելով մեր նախադեպային իրավունքը, որի համաձայն ակնհայտորեն անարդյունավետ չքվացող իրավական պաշտպանության կոնկրետ միջոցի հաջողության հեռանկարների վերաբերյալ պարզապես կասկածների գոյությունն իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու հիմնավոր պատճառ չէ (տե՛ս *Akdivar and Others v. Turkey*, 16 սեպտեմբերի 1996թ., § 71, *Չեկոսլոներ վնիռների և որոշումների վերաբերյալ* 1996-IV և *Brusco v. Italy* (dec.), թիվ 69789/01, ՄԻԵԴ 2001-IX), կեզրահանգեի, որ դիմումատուն չէր սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

2. Վճռի 101-104-րդ պարբերությունների առնչությամբ պետք է ընդունեմ, որ դժվարությամբ եմ կիսում այն մոտեցումը, որը հանգեցնում է Կառավարության ներկայացրած միևնույն նախնական առարկությունների քննարկմանը երկու անգամ՝ առաջին անգամ ընդունելիության մասով, իսկ երկրորդ անգամ՝ ըստ էության. այս մոտեցման արդյունքում հնարավոր է եզրահանգել, որ Կառավարությունը զրկվում է քննարկվող առարկությունները դրանց ընդունելիության մասով ներկայացնելուց, սակայն Կոնվենցիայի ըստ էության խախտում տեղի չի ունեցել: Կարծում եմ, դրանք միայն

ընդունելիության փուլում քննելը բավարար կլիներ՝ դրանց ըստ էության քննության փուլում չանդրադառնալով: